Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն – Հայաստան

Caucasus Research Resource Center – Armenia

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Հանրային կարծիքի հարցման հիմնական արդյունքներ

Հարցումն իրականացվել է Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին» ծրագրի շրջանակներում

Այս զեկույցը հրատարակվել է Եվրոպական Միության օժանդակությամբ՝ «Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին» ծրագրի շրջանակներում: Հրատարակության բովանդակության միակ պատասխանատուն ՀՌԿԿ-Հայաստանն է: Այն կարող է չհամընկնել Եվրոպական Միության և ծրագրի այլ գործընկերների տեսակետների հետ:

Երևան

Ապրիլ 2015

Բովանդակություն

Նախաբան և երախտիքի խոսք 5

Հապավումներ 7

Համառոտ ակնարկ 8

Ներածություն. Հայաստան-Թուրքիա փոխհարաբերությունների ներկան 11

1. Տվյալների մասին 13

2. Տեղեկացվածություն հայ-թուրքական հարաբերությունների մասին 14

3. Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորում 18

4. Վերաբերմունք Թուրքիայի հանդեպ 26

5. Հայոց ցեղասպանության ճանաչում և հիշատակման վարքագիծ 28

6. Հայ-թուրքական հաշտեցման խնդիրներ 31

7. Հիմնական բացահայտումներ և հանրային քաղաքականության առաջարկներ 35

Հավելված 1. Գծապատկերներ և աղյուսակներ 41

Հավելված 2. Ընտրանքի մեթոդաբանություն և հարցվածների ժողովրդագրական բնութագիր 48

Գծապատկերների և աղյուսակների ցանկ

Գծապատկեր 2.1. Արդյոք հետաքրքրվա՞ծ եք հայ-թուրքական պաշտոնական հարաբերությունների կարգավորմամբ 15
Գծապատկեր 2.2. Հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ տեղեկացվածության և հետաքրքվածության միջև կապը 16
Գծապատկեր 2.3. Հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ Թուրքիայում ու՞մ կարծիքներն են առավել վստահելի Ձեզ համար 17
Գծապատկեր 2.4. Հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ տեղեկատվության մեջ ի՞նչն է Ձեզ առավել հետաքրքրում 18
Գծապատկեր 3.1. Որքանո՞վ եք հավանություն տալիս Հայաստանի և Թուրքիայի սահմանի բացմանը 19
Աղյուսակ 1. Ասացեք խնդրեմ, որքանո՞վ եք հավանություն տալիս Հայաստանի և Թուրքիայի սահմանի բացմանը 20
Գծապատկեր 3.2. Վերաբերմունքը Հայաստանի և Թուրքիայի սահմանի բացմանն ըստ հարցվածների կրթամակարդակի 21
Գծապատկեր 3.3. Վերաբերմունքը Հայաստանի և Թուրքիայի սահմանի բացմանն ըստ հարցվածների բնակավայրի 21
Աղյուսակ 2. Հայ-թուրքական սահմանի բացման ազդեցությունը Հայաստանի 22
Գծապատկեր 3.4. Սահմանի բացման հնարավոր ազդեցությունը տնտեսության ու անվտանգության վրա 23
Գծապատկեր 3.5. Տնտեսության վրա սահմանի բացման ազդեցության գնահատականն ըստ հարցվողների կրթության 24
Գծապատկեր 3.6. Սահմանի բացման ազդեցությունն անվտանգության վրա. տարբերություններն ըստ մարզերի 24
Աղյուսակ 3. Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ազդեցությունը հետևյալ գործընթացների վրա 25
Գծապատկեր 3.7. Հարցվածների վերաբերմունքը 2009թ. ստորագրված հայ-թուրքական արձանագրությունների կասեցմանը 26
Գծապատկեր 4.1. Որքանո՞վ եք համաձայն Թուրքիայի և թուրք ժողովրդի վերաբերյալ հետևյալ դատողությունների հետ 27
Գծապատկեր 4.2. Թուրքիայի բնակչության ընդհանուր վերաբերմունքը հայերի նկատմամբ 28
Գծապատկեր 5.1. Ինչպիսի՞ հատուցում եք ակնկալում Թուրքիայից 30
Գծապատկեր 5.2. Ըստ Ձեզ, ի՞նչի ազդեցությամբ Թուրքիան կճանաչի Հայոց ցեղասպանությունը 31
Գծապատկեր 6.1. Թուրքիայի հետ ո՞ր ոլորտներում պետք է հարաբերություններ հաստատի Հայաստանը 33
Գծապատկեր 6.2. Հետևյալ քայլերից որի՞ն հավանություն կտայիք, որ իրականացներ քաղաքացիական հասարակությունը հայ-թուրքական հաշտեցման գործում 34
Գծապատկեր 7. Հարցվածների հետաքրքրվածությունը հայ-թուրքական պաշտոնական հարաբերությունների կարգավորմամբ ըստ տարիքային խմբերի 41
Գծապատկեր 8. Հարցվածների հետաքրքրվածությունը հայ-թուրքական պաշտոնական հարաբերությունների կարգավորմամբ ըստ նրանց կրթամակարդակի 41

Գծապատկեր 9. Հարցվածների հետաքրքրվածությունը հայ-թուրքական պաշտոնական հարաբերությունների կարգավորմամբ Թուրքիային սահմանակից կամ ոչ սահմանակից մարզերում 42
Գծապատկեր 10. Հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալիս Հայաստանում ու՞մ կարծիքներն են առավել վստահելի Ձեզ համար 42
Գծապատկեր 11. Որքանո՞վ եք հավանություն տալիս Հայաստանի և Թուրքիայի սահմանի բացմանը 43
Գծապատկեր 12. Հարցվողների հավանություն տալի՞ս եք, թե՞ ոչ, երբ Ձեր ազգակիցները բիզնես են անում կամ Ձեր ազգի կանայք/տղամարդիկ ամուսնանում են թուրքերի հետ..... 43
Գծապատկեր 13. Որքանո՞վ եք հավանություն տալիս սահմանի բացմանը նախապայմաններով 44
Գծապատկեր 14. Ինչպե՞ս եք վերաբերում Թուրքիայի անդամակցությանը Եվրամիությանը 44
Գծապատկեր 15. Պահանջներ, որոնք պետք է կատարի Թուրքիան, որպեսզի մուտք գործի Եվրամիություն 45
Գծապատկեր 16. Ձեր նախնիներից որևէ մեկը այս կամ այն կերպ տուժե՞լ է Հայոց ցեղասպանությանից 45
Գծապատկեր 17. Ի՞նչ դիրքորոշում պետք է ընդունի Հայաստանը Թուրքիայի հետ հարաբերություններում 46
Գծապատկեր 18. Թուրքիայի հետ ո՞ր ոլորտներում պետք է հարաբերություններ հաստատի Հայաստանը 46
Գծապատկեր 19. Ձեր կարծիքով, որքանո՞վ է ազդում Ադրբեջանը հայ-թուրքական հարաբերությունների վրա 47
Աղյուսակ 4. Հայացք Թուրքիայից. 47
Աղյուսակ 5. Ընտրանքային հետազոտության տարածքային ընդգրկումն ըստ բնակավայրերի տիպի և մարզերի..... 48
Աղյուսակ 6. Հարցվածների ժողովրդագրական բնութագիրը 49

Նախաբան և երախտիքի խոսք

Հարգելի ընթերցող

Մեծ սիրով Ձեզ ենք ներկայացնում սույն հետազոտությունը՝ Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների կարգավորման վերաբերյալ: Հետազոտության նպատակը Հայաստան-Թուրքիա փոխհարաբերությունների կարգավորման և ժողովուրդների միջև բաց երկխոսությանն ուղղված ջանքերը սատարելն է՝ երկու երկրների հասարակություններում հավասարակշռված տեղեկատվության հասանելիություն ապահովելու միջոցով: Հետազոտության հիմնական խնդիրներն են՝ սոցիոլոգիական հարցման միջոցով պարզել Հայաստանի հանրության կարծիքը հայ-թուրքական հարաբերությունների մասին, բացահայտել և քննարկել դրանց կարգավորման հնարավոր ուղիները, ձևակերպել և առաջարկել կարգավորման գործընթացին նպաստող հանրային քաղաքականության առաջարկներ:

Հայաստանի և Թուրքիայի բարդ հարաբերությունները պայմանավորված են պատմական գործոններով՝ ներառյալ Հայոց ցեղասպանությունը և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը: Ուստի, սույն զեկույցում փորձ է արվել բացահայտել ՀՀ կառավարության և քաղաքացիական հասարակության նախաձեռնությունների համապատասխանությունը Հայաստանի քաղաքացիների նախընտրություններին՝ պաշտոնական Երևանի և Անկարայի միջև ներկայիս հարաբերությունների վերաբերյալ: ՀՌԿԿ-Հայաստանը և ծրագրին օժանդակած իր գործընկերը՝ Թուրքիայի տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամը (ԹՏԱՀՀ), խորապես հավատացած են, որ այս հիմնահարցի վերաբերյալ հանրային կարծիքը խիստ կարևոր է լայն լսարանին՝ ներառյալ պաշտոնատարներին, հետազոտողներին և ԶԼՄ-ներին իրազեկելու գործում: Հայ-թուրքական ներկայիս հարաբերությունների ընկալումը երկու երկրների հանրության կողմից, ինչպես նաև առկա իրավիճակը շտկելու մասին հանրության պատկերացումները, մեր կարծիքով, խիստ անհրաժեշտ են՝ ազգային և միջազգային ծիրերում ավելի ճկուն հասարակություն ձևավորելիս:

Այս հետազոտությունը Հայաստանի և Թուրքիայի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և հետազոտական կենտրոնների համատեղ ջանքերի հրաշալի օրինակ է: Այս հիմնահարցի վերաբերյալ առաջներում ևս իրականացվել են տարբեր հետազոտություններ: ՀՌԿԿ-Հայաստանը և ԹՏԱՀՀ-ը 2010թ-ին իրականացրել են երկու ազգերի միջև հարաբերությունների մասին հանրային կարծիքի հարցում, որը սակայն ներկայացվող հետազոտության նման խորքային չէր: Հայ-թուրքական հարաբերությունների մասին հասարակության ընկալումների մասին պատկերացում ստանալու համար ՀՌԿԿ-Հայաստանը պարբերաբար մի քանի հարց է ներառել նաև իր ամենամյա հարցման՝ Կովկասյան բարոմետրի հարցաթերթում: Բացի դրանից, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը (ՌԱՀՀԿ) Հայոց ցեղասպանության հիշատակման 90-րդ տարելիցին (2005թ.) իրականացրել է հայաստանցիների հանրային կարծիքի թեմատիկ ուսումնասիրություն: Նմանապես, Տնտեսական և արտաքին քաղաքականության հետազոտությունների կենտրոնը (ՏԱՔՀԿ) Թուրքիայում ուսումնասիրել է Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նկատմամբ թուրքական հանրության վերաբերմունքը: Թեև նախորդ բոլոր հետազոտությունները ծանրակշիռ են եղել, մենք հավատացած էինք, որ դրանցում պակասում էր մի էական հանգամանք՝ Հայոց ցեղասպանության հիշատակման 100-րդ տարելիցին նախորդած անցքերն ու փոփոխությունները: Նախորդ հարցումներից մենք փոխառել ենք մի շարք հարցեր, ինչը

հնարավոր է դարձրել ժամանակի ընթացքում հանրային կարծիքի համեմատությունը: Հուսով ենք, որ վերլուծական խմբին հաջողվել է կազմել ընդգրկուն, արժեքավոր զեկույց, ինչը ազգային ու միջազգային մակարդակներում բաց քննարկումների նոր հնարավորություններ կընձեռի: Ակնկալում ենք, որ հետազոտության արդյունքները կնպաստեն Հայաստանի և Թուրքիայի միջև տնտեսական, քաղաքական և սոցիալական զարգացումներին: Միաժամանակ, մենք ուրախ կլինենք լսել զեկույցում ներկայացված արդյունքների վերաբերյալ յուրաքանչյուր ընթերցողի մտայնությունները, նկատառումները և առաջարկները:

Օգտվելով հնարավորությունից, հարկ ենք համարում երախտագիտություն հայտնել բոլոր նրանց, ովքեր աշխատել են այս զեկույցի վրա. Ալեքսանդր Գրիգորյանին, ով շարադրել է վերլուծական զեկույցը, Մոնիկա Շահմենենդյանին, ով կազմել է ընտրանքը և գծապատկերները, Հրաչյա Կաժոյանին և Սյուզաննա Բարսեղյանին՝ հարցաթերի մշակման համար, Թալար Կակիլյանին, Այբարս Գորգուլուին, Զերին Չենգիզին և Էմինե Օնարանին՝ զեկույցի խմբագրմանն ու թարգմանությանն օժանդակելու համար, Աննա Շահնազարյանին, Արա Պապյանին, Արտակ Այունցին, Գևորգ Տեր-Գաբրիելյանին, Էսթեր Հակոբյանին, Լուսինե Խառատյանին, Վահրամ Տեր-Մաթևոսյանին, Տիգրան Մաթոսյանին և այլոց՝ հարցաթերթի կազմմանն ավանդ բերելու համար, ինչպես նաև բոլոր նրանց, ովքեր սատարել են այս զեկույցի լույս աշխարհ գալուն: Շնորհակալություն:

Հարգանքով՝

Հեղինե Մանասյան
ՀՌԿԿ-Հայաստանի տնօրեն

Հապավումներ

ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԵՀՀ	Եվրասիա համագործակցության հիմնադրամ
ԵՄ	Եվրոպական Միություն
ԹՏՄՀՀ	Թուրքիայի տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամ
ԼՂՀ	Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
ԿԲ	Կովկասյան բարոմետր
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՌԿԿ	Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՌԱՀՀԿ	Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՏԱՔՀԿ	Տնտեսական և արտաքին քաղաքականության հետազոտությունների կենտրոն

Համառոտ ակնարկ

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացին աջակցելու նպատակով իրականացված հանրային կարծիքի հարցման արդյունքներից ներկայացվող զեկույցում առանձնացվել են հետևյալ բացահայտումները և առաջարկները.

- Հայ-թուրքական հարաբերությունների մասին խիստ հետաքրքրված հարցվածներն ունեն համապատասխան տեղեկացվածություն: Հետագայում տեղեկացվածության մակարդակը կարող է բարձրանալ, եթե հայ-թուրքական հարաբերությունների մասին հասանելի տեղեկատվություն լինի: Ինչ վերաբերում է տեղեկատվության աղբյուրներին, թե՛ հետազոտությունները, թե՛ փորձագիտական կարծիքը մեծ ազդեցություն ունեն Հայաստան-Թուրքիա փոխհարաբերությունների մասին հարցվողների կարծիքի ձևավորման վրա: Հանրային քաղաքականության հեռանկարի տեսանկյունից այս խնդրի վերաբերյալ ներդրումներն անկախ և անկողմնակալ հետազոտությունների ու փորձագիտական ուսումնասիրությունների մեջ կօգնեն ուղղորդել, սոցիալապես ավելի միասնական դարձնել հանրային կարծիքը:
- Հայ-թուրքական սահմանի բացման վերաբերյալ դրական դիրքորոշումը կապված է կրթական ավելի բարձր մակարդակի հետ: Կրթված հարցվածները նաև ավելի շատ են հակված կարծելու, որ սահմանի բացումը դրական ազդեցություն կունենա տնտեսության վրա: Հետևաբար, ներդրումը կրթության մեջ կբարձրացնի հասարակության իրազեկվածությունը և կօժանդակի կարգավորման գործընթացին:
- Հստակ տարբերություններ կան կարգավորման վերաբերյալ մարդկանց նախընտրություններում՝ կախված հայ-թուրքական սահմանից հարցվողի բնակավայրի հեռավորությունից: Ընդհանուր առմամբ, Թուրքիային սահմանակից մարզերի հարցվածներն ավելի շատ են հետաքրքրված երկկողմ հարաբերությունների կարգավորմամբ: Անգամ այնպիսի զգայուն հարցում, ինչպիսին անվտանգությունն է, սահմանակից մարզերի հարցվողներն ավելի դրական են գնահատում սահմանի բացման ազդեցությունը: Սակայն էական տարբերություններ չկան սահմանի բացման տնտեսական ազդեցության մասին տեսակետներում՝ կախված հարցվողների բնակավայրից: Կարգավորման տնտեսական հեռանկարը լայնորեն ընդունելի է հարցվածների կողմից բոլոր մարզերում:
- Չնայած հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի վերաբերյալ գիտելիքների առկայությանը, որոշակի քաղաքական ջանքեր են անհրաժեշտ՝ իրականացնելու հանրությանը հասանելի խորքային հետազոտություններ: Այս քաղաքականության համար պատասխանատու կառավարական կառույցների (Արտաքին գործերի նախարարություն, Սփյուռքի նախարարություն և այլն) և հետազոտական հաստատությունների միջև համատեղ համակարգված նախաձեռնությունները կնպաստեն գործընթացին:

- Հարցվածները համակարծիք չեն ազգային անվտանգության վրա սահմանների բացման ազդեցությունը գնահատելիս: Հակառակը, նրանք հավանություն են տալիս բացմանը՝ գնահատելով դրա տնտեսական հետևանքները: Առանց նախապայմանների կարգավորումն ամբողջությամբ չի վերացնում անվտանգության խնդիրը, սակայն առնվազն բացառում է ուղիղ (բացասական) կապը երկրների պաշտոնապես հայտարարված քաղաքականությունների տնտեսական և անվտանգության գործոնների միջև: Ակնհայտ է, որ հայաստանցիները գիտակցում են սահմանի բացման արդյունքում տնտեսական զարգացման ձեռքբերումների ու կորուստների արժեքը:
- Հարցման մասնակիցներն էապես հետաքրքրված են հարաբերությունների կարգավորմամբ, ինչը ենթադրում է, որ ՀՀ կառավարությունը պետք է շարունակի ջանք ու ժամանակ ներդնել Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման գործում: Հայաստանցիները գիտակցում են, որ Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը և փակ սահմանները խոչընդոտում են Հայաստանի զարգացմանը: Կարգավորման գործում հետաքրքրվածությունը բարձր է հասարակության բոլոր տարիքային խմբերի շրջանում:
- Հարցումը ցույց է տալիս, որ կարգավորումն աջակցություն ունի հասարակության մեծամասնության կողմից: Սակայն պատկերը փոխվում է, երբ ուղղակիորեն նշվում է նախապայմանների գործոնը: Ընդհանուր առմամբ, հավանության աստիճանը կտրուկ իջնում է, երբ սահմանի բացումը կապվում է նախապայմանների հետ: Այսինքն, Հայաստանի հասարակությունը նախընտրում է սահմանի բացումն առանց նախապայմանների:
- Նախապայմանների նկատմամբ հայաստանցիների վերաբերմունքի փոփոխությունը դիտարկելիս նկատելի է, որ երկկողմ հարաբերություններում առանց նախապայմանների մոտեցումը նրանք 2014թ-ին ավելի են կարևորել, քան 2010թ-ին: Թերևս, առանձին ուսումնասիրություն է պետք՝ գնահատելու վերջին տարիներին առանց նախապայմանների պաշտոնական դիրքորշման ազդեցությունը բնակչության վերաբերմունքի վրա:
- Այդուհանդերձ, ըստ հարցվածների, առանց նախապայմանների կարգավորման գործընթացում չպետք է անտեսվեն Հայոց ցեղասպանության և/կամ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հիմնահարցերը: Երբ սահմանի բացման հարցն առկախ է, հարցվածների հետաքրքրությունն ավելի շատ սևեռվում է հենց այս երկու հարցերին: Փոխհարաբերությունների բազմակողմանիությունն էլ ավելի է բարդացնում դիվանագիտական քննարկումները և քաղաքական քայլերը:
- Համադրելով 2005թ. ՌԱՀՀԿ և 2010թ. Կովկասյան բարոմետրի հարցումների տվյալները այս ուսումնասիրության արդյունքների հետ՝ կարելի է նկատել, որ վերջին տասնամյակում հայաստանցիներն առավել չեզոք վերաբերմունք ունեն Թուրքիայի՝ Եվրոպական Միության հավանական անդամակցությանը: Շատերը Թուրքիայի՝ ԵՄ անդամակցությունը համարում են նպաստավոր Հայաստանի համար, քանի որ դա կենթադրի Թուրքիայի համար որոշակի

պարտականությունների և պայմանների կատարում նախքան անդամակցությունը: Միևնույն ժամանակ, 2014թ. հարցվածների 94%-ը նշել է, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը պետք է նախապայման լինի Թուրքիայի՝ ԵՄ անդամակցության համար, մինչդեռ 2012թ, ըստ Կովկասյան բարոմետրի տվյալների, նման կարծիք էր հայտնել հարցվածների 84%-ը: Այսպիսով, 2014թ. հայաստանցիները Ցեղասպանության ճանաչմանն ավելի մեծ ուշադրություն են դարձնում, քան երկու տարի առաջ:

- Ըստ հարցվածների, Հայաստանի կառավարությունը Թուրքիայից պետք է պահանջի ոչ միայն Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչումը, այլ նաև տարածքային իրավունքների հատուցում: Չնայած հարցվածները մեծապես տեղեկացված են և կարևորել են տնտեսական զարգացումը, նրանց մոտ խիստ ընդգծված է եղել հատուցման պահանջը: Հայաստանցիները քաջատեղյակ են, որ Թուրքիան շատ զգայուն է հատուցման պահանջների նկատմամբ, և դիտարկում է այդ պահանջները Ղարաբաղյան հիմնահարցի հետ համատեղ՝ որպես տնտեսական կապերի հաստատման հիմնական նախապայմաններից մեկը:
- Չնայած պաշտոնական Երևանի կողմից հարաբերությունների կարգավորմանն ու Ցեղասպանության ճանաչմանն ուղղված բազում նախաձեռնություններին՝ հարցվածները չեն հավատում, որ ՀՀ պաշտոնական քաղաքականությունը կստիպի Թուրքիային ճանաչել Հայոց Ցեղասպանությունը: Ավելին, նրանք կարծում են, որ Ցեղասպանության ճանաչումը կարող է տեղի ունենալ երրորդ կողմի՝ Ռուսաստանի, Եվրոպական Միության և/կամ Միացյալ Նահանգների ճնշմամբ: Ճանաչման ուղղությամբ պաշտոնական Երևանի ներկայիս քաղաքականությունը պետք է ավելի թիրախավորված և արդյունավետ լինի՝ հանրության համար համոզիչ լինելու նպատակով:
- Հարցվածների 70%-ից ավելին նշել է, որ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների վրա մեծ ազդեցություն ունի Ադրբեջանի քաղաքականությունը: Հայաստանցիները մեծապես համոզված են, որ Հայաստանի քաղաքական քայլերին Անկարայի պատասխանը ներառում է Ադրբեջանի շահերը:
- Հարցվածները որոշակի նշանակություն են տվել քաղաքացիական հասարակության նախաձեռնություններին՝ ուղղված հայ-թուրքական հաշտեցմանը: Հարցվածները ՀԿ-ներին առաջարկել են հայ-թուրքական հաշտեցմանն ուղղված մի շարք քայլեր, որոնցից սակայն ոչ մեկը չի արժանացել հարցվածների մեծամասնության հավանությանը: Հավանաբար, հարցվածները չեն վստահում հաշտեցման գործում քաղաքացիական նախաձեռնությունների դերակատարմանը: Ո՞րն է ՀՀ կառավարության անելիքն այս գործում: Ներկա վերլուծությունը հուշում է, որ պաշտոնական քաղաքականությունը որոշակիորեն համապատասխանում է հանրության նախընտրություններին, և, որ ՀՀ կառավարությանը պետք է, որ չխոչընդոտի քաղաքացիական հասարակության նախաձեռնությունները, քանզի դրանք արտահայտում են հասարակության իրական մղումները: Հարցվածների կողմից քաղաքացիական

նախաձեռնությունները սակավ կարևորելը կարելի է նաև բացատրել նրանով, որ Հայաստանի հասարակությունը բավականաչափ չի գնահատում քաղաքացիական նախաձեռնություններն առահասարակ, հետևաբար, զգուշավոր է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդիրները քաղաքացիական հասարակության կառույցներին լիազորելու հարցում: Եթե դա այդպես է, ապա պահանջվում են Հայաստանի կառավարության և միջազգային կազմակերպությունների երկարաժամկետ ջանքերը՝ հասարակական կազմակերպությունների և դրանց նախաձեռնությունների դերի ու նշանակության (մասնավորապես, կարգավորման գործընթացում) մեծացման համար:

Ներածություն. Հայաստան-Թուրքիա փոխհարաբերությունների ներկան

Հայաստանը և Թուրքիան, լինելով հարևան երկրներ և գտնվելով Եվրոպայի և Ասիայի խաչմերուկում, կիսում են 328կմ ցամաքային սահման: Երկու երկրները պաշտոնական դիվանագիտական հարաբերություններ չունեն 1993թ-ից ի վեր, երբ Թուրքիան փակեց սահմանը՝ ի պատասխան Լեռնային Ղարաբաղի շուրջ Հայաստանի և Ադրբեջանի միջև ընթացող պատերազմի: Չնայած հայ-թուրքական սահմանի բացման սոցիալ-տնտեսական հնարավոր ազդեցության մասին կան տարբեր գնահատականներ[1]՝ դրա բացմանը հիմնականում կենսական կարևորություն է տրվում ոչ միայն Հայաստանի և Թուրքիայի, այլև տարածաշրջանի կայունության համար: Հարաբերությունների կարգավորման վերջին փորձն արվեց 2009թ-ին, երբ Թուրքիայի և Հայաստանի կառավարությունները միջազգային հանրության միջնորդությամբ սկսեցին, այսպես կոչված, «ֆուտբոլային դիվանագիտությունը»[2]: Այդուհանդերձ, 2010թ-ին բանակցությունների և հարաբերությունների վերականգնման գործընթացը կասեցվեց[3]: Կան մի շարք բարդ և հակասական խնդիրներ, որոնք խոչընդոտում են բանակցությունների առաջընթացը: Դրանցից երեք ամենակարևոր հիմնահարցերն են՝

- *Ցեղասպանության ճանաչում.* Հայաստանի և Թուրքիայի միջև բանակցությունների ամենավիճելի և զգայուն հարցը 20-րդ դարասկզբի Հայոց ցեղասպանությունն է: Ցեղասպանության ճանաչումը Հայաստանի արտաքին

1 Ըստ Համաշխարհային բանկի փորձագետ Եվգենի Պոլյակովի, Հայաստան-Թուրքիա և Հայաստան-Ադրբեջան սահմանների բացումը կմեծացնի Հայաստանի արտահանման ծավալները 200%-ով և ՀՆԱ-ն՝ 30%-ով (տե՛ս Polyakov, E. (2000). “Changing Trade Patterns after Conflict Resolution in SouthCaucasus”, World Bank paper). AEPLAC-ի փորձագետի հոդվածում նշվում է ավելի քիչ արդյունքի մասին՝ 17.7% արտահանման և 2.7% ՀՆԱ-ի աճ (տե՛ս Jrbashyan, T. (2005). “Study of the Economic Impact on the Armenian Economy from Re-Opening of the Armenian-Turkish Borders. Implications for External Trade”, Armenian-European Policy and Legal Advice Centre (AEPLAC), www.aeplac.eu): Բեյլոքը ենթադրում է, որ սահմանի բացման արդյունքում Հայաստանի ներկրումը Թուրքիայից կավելանա մինչև 50% և արտահանումը դեպի Թուրքիա՝ մինչև 38% (տես Beilock, R., K.Toroysan, and A.Gagnidze, (2006a). “A Phased Strategy for Opening Armenia’s Western Border”, Armenian Journal of Public Policy, Conference Proceedings, March 2007, www.aiprg.net).

2 Թուրքիան և Հայաստանը սկսել են երկխոսությունը, երբ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հրավիրեց իր թուրք գործընկեր Աբդուլլահ Գյուլին՝ մասնակցելու Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային խաղին, 2008թ-ի սեպտեմբերին:

3 Görgülü, A., Iskandaryan, A., and Minasyan, S. (2010) ‘Turkey-Armenia Dialogue Series: Assessing the Rapprochement Process’, Working Paper of TESEV.
http://www.tesev.org.tr/assets/publications/file/Assessing%20the%20Raprochment%20Process_05.2010.pdf

քաղաքականության առանցքային հարցերից է: Թուրքիան համառորեն հրաժարվում է ճանաչել Հայոց ցեղասպանությունը և կոչ է անում հարցը հանձնել պատմաբանների քննությանը[4]:

- *Տարածքային պահանջներ.* Թուրքիան հետևողականորեն անհանգստություն է հայտնում Հայաստանի տարածքային հնարավոր պահանջների վերաբերյալ՝ պնդելով, որ Հայաստանն առ այսօր պաշտոնապես չի ճանաչել երկու պետությունների ներկայիս սահմանները հաստատող Կարսի (1921թ.) և Ալեքսանդրապոլի (1920թ.) պայմանագրերը:
- *Լեռնային Ղարաբաղ.* Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտությունը, ինչը 1990-ականների կեսերից «ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն» վիճակում է, մեծ ներգործություն ունի Հայաստան-Թուրքիա հարաբերությունների վրա: 1980-ականների սկզբին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը բարձրաձայնեց իր իրավունքները՝ ինքնորոշման և Հայաստանի հետ վերամիավորման մասին: Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի և Ադրբեջանի միջև խնդիրները ավելի սրվեցին՝ հանգեցնելով երկու երկրների միջև պատերազմի: Չնայած, որ 1994թ-ին զինադադար հաստատվեց, ինչպես պնդում է Թուրքիայի վերլուծաբաններից մեկը, «Հայաստանը շարունակում է վերահսկել Ադրբեջանի տարածքների մոտ 20%-ը՝ հակադրվելով միջազգային իրավունքին և ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովին»[5]: Ի պատասխան դրա, Ադրբեջանը ճնշում է գործադրում իր դաշնակից Թուրքիայի վրա՝ փակ պահելու Հայաստանի հետ սահմանը, այն հույսով, որ դա կստիպի Հայաստանին հանել իր զորքերը Ադրբեջանի արևմուտքից[6]: Մյուս կողմից, Հայաստանը հայտարարել է, որ իր հարաբերություններն Ադրբեջանի հետ և Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը չպետք է որևէ ձևով ազդեն Թուրքիայի հետ բանակցությունների վրա, քանի որ դրանք որևէ առնչություն չունեն միմյանց հետ:

Հանրային կարծիքի նոր հարցման նպատակն է գնահատել հայաստանցիների դիրքորոշումը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ: Հայաստանի և Թուրքիայի իշխանությունների միջև վերջին իրադարձությունների խորապատկերին՝ հարցումն ուղղված է բացահայտելու, թե որքանով են ՀՀ կառավարության նախաձեռնությունները համապատասխանում Հայաստանի քաղաքացիների նախընտրություններին: Հանրային կարծիքի փոփոխությունների դինամիկ պատկերը ստանալու ակնկալիքով, այս հետազոտության արդյունքները որոշ դեպքերում համեմատվել են Կովկասյան բարոմետրի հարցման մի շարք տվյալների հետ[7]:

---

[4] Այս նպատակով, 2005թ. Թուրքիայի վարչապետն առաջարկեց ՀՀ նախագահին հիմնել պատմաբանների և այլ մասնագետների համատեղ խումբ (տե՛ս David Shahnazaryan, “Turkish Policy Quarterly”, Fall 2014).

[5] Görgülü, A. 2008. ‘Turkey-Armenia Relations: A Vicious Circle’, Turkish Economic and Social Studies Foundation.

[6] de Waal, T. 2011. ‘Turkey and Armenia: A Second Chance?’ Turkish Policy Quarterly.

[7] Կովկասյան բարոմետրը տնային տնտեսությունների ամենամյա (2004-2013թթ.) հարցում է՝ սոցիալ-տնտեսական խնդիրների և քաղաքական դիրքորոշումների մասին, որն իրականացնում է ՀՌԿԿ-ը: Տվյալների բազաները ազատորեն հասանելի են հետևյալ հղմամբ. http://caucasusbarometer.org/en/datasets/

1. Տվյալների մասին

Ներկայացվող զեկույցը հիմնված է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստանի կողմից 2014թ. դեկտեմբերին հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղիների մասին անցկացված ընտրանքային հետազոտության տվյալների վրա: Պատահականորեն ընտրված մոտ 1200 տնային տնտեսությունների չափահաս բնակչությանը (ընտրանքի մեթոդաբանության մանրամասները և հարցվածների ժողովրդական բնութագիրը ներկայացված են հավելված 2-ում) հասցեագրված հարցաթերթի հինգ մասերից յուրաքանչյուրն ուղղված է հայ-թուրքական հարաբերությունների առանձին կողմերին.

- ընդհանուր տեղեկացվածություն հայ-թուրքական հարաբերությունների մասին,
- հայ-թուրքական հարաբերությունների կարգավորում,
- վերաբերմունք Թուրքիայի հանդեպ,
- Հայոց ցեղասպանության ճանաչում և հիշատակման վարքագիծ,
- հայ-թուրքական հաշտեցում:

Հանրային կարծիքի հարցումից ստացված տվյալները ներառում են հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ հարցերի լայն շրջանակ: Վերլուծության մեջ օգտագործվել են նաև հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ երկու այլ հետազոտությունների տվյալներ: Դրանցից առաջինը 2005թ. իրականացրել է Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը (ՌԱՀՀԿ): Այն անդրադարձել է միայն Հայոց ցեղասպանության վերաբերյալ հարցերին, որոնք ամփոփվել են «Հայոց ցեղասպանությունը 90 տարվա սահմանագծին» խորագիրը կրող վերլուծական զեկույցում[8]: Երկրորդը ՀՌԿԿ-Հայաստանի Կովկասյան բարոմետր (ԿԲ) ամենամյա հարցումն է, որն առավել լայն ուսումնասիրություն է և ներառում է մի շարք սոցիալ-տնտեսական հիմնահարցեր Հարավային Կովկասի երկրների համար: 2009-2013թթ. անցկացված այդ հարցումներում հայ-թուրքական հարաբերությունների մասին մի քանի հավելյալ հարցեր են ուղղվել միայն հայաստանաբնակներին:

Ներկա հարցման հարցաթերթում որոշ հարցեր փոխառնվել են վերոնշյալ երկու հարցումներից՝ արդյունքները համեմատելու և հայ-թուրքական հարաբերությունների կարևոր կողմերի մասին բնակչության վերաբերմունքի շարժընթացը (վերջին 5-10 տարիներին) բացահայտելու նպատակով: Թեև ներկա հետազոտությունը կնպաստելու Հայոց ցեղասպանության հիշատակման 100-րդ տարելիցի քննարկումներին, դրա շրջանակներն ավելի լայն են և ուղղված երկու երկրների հարաբերությունների բոլոր էական կողմերին:

[8]Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը (ՌԱՀՀԿ) Հայոց ցեղասպանության մասին հանրային կարծիքի հարցում է անցկացրել ՀՀ 1900 քաղաքացիների շրջանում: Ամփոփ վիճակագրությունը հասանելի է հետևյալ հղմամբ. http://acnis.am/old/pr/genocide/Socio13eng.pdf.

Զեկույցի *երկրորդ մասում* ներկայացվել է հարցվածների ընդհանուր տեղեկացվածությունը հայ-թուրքական հարաբերությունների մասին: Դիտարկվել են երկկողմ հարաբերությունների մասին հարցվածների իրազեկվածությունը, տեղեկատվության աղբյուրները և հետաքրքրությունների շրջանակները: *Երրորդ մասում* ներկայացվել է հանրային կարծիքը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ներուժի մասին: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել նախապայմանների դերին սահմանների բացման հարցում, ինչպես նաև հարաբերությունների կարգավորման հնարավոր ազդեցությանը Հայաստանի համար խիստ էական հիմնախնդիրների (օր., Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչում, Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծում, Հայաստանի տնտեսության զարգացում և այլն[9]) լուծման վրա: *Չորրորդ մասում* բացահայտվել է հայերի վերաբերմունքը թուրքերի և խնդրահարույց հարցերի շուրջ Թուրքիայի Հանրապետության պաշտոնական դիրքորոշման հանդեպ: Դիտարկվել է թուրքերի հանդեպ վստահությունը բիզնեսում և այլ սոցիալական (ընտանեկան) հարաբերություններում: Հայոց ցեղասպանության ճանաչման և հիշատակման վարքագծի մասին քննարկումները զետեղվել են *հինգերորդ մասում*, իսկ *վեցերորդ մասում* լուսաբանվել են հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հնարավոր ուղղությունները: Ներկայացվել են Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների հաստատման հնարավոր ոլորտները և նման հարաբերությունների հաստատման հասարակության պատրաստակամությունը, ինչպես նաև կարգավորման համար Հայաստանի և Թուրքիայի հաջորդ քայլերը: Ուսումնասիրվել է նաև Ադրբեջանի գործոնի ազդեցությունը հայ-թուրքական հարաբերությունների վրա:

Տեխնիկական հուշագիր. *Զեկույցում զետեղված բոլոր գծապատկերներում և աղյուսակներում ներկայացված են բոլոր վավեր պատասխանները՝ արտահայտված տոկոսներով (եթե այլ նշում չկա) և բացառելով «չգիտեմ» և «հրաժարվում եմ պատասխանել» տարբերակները: Այն դեպքերում, երբ հարցվածները մեկից ավելի պատասխանի հնարավորություն են ունեցել, տոկոսների հանրագումարը տարբերվում է հարյուրից, ինչը հաշվարկի առանձնահատկություն է, ոչ թե թվաբանական սխալ: Վերլուծության մեջ ներկայացված թվերի և գծապատկերներում կամ աղյուսակներում տրված թվերի միջև կարող են լինել աննշան տարբերություններ, ինչը թվերի կլորացման հետևանք է: Որոշ դեպքերում, շարադրանքը կամ պատկերներն ավելի հստակ ներկայացնելու նպատակով, փոքրարժեք թվերն անտեսվել են:*

2. Տեղեկացվածություն հայ-թուրքական հարաբերությունների մասին

Ինչպես ենթադրվում էր, հարցվածները բավականին հետաքրքրված են հայ-թուրքական պաշտոնական հարաբերությունների կարգավորմամբ: Այսպես, նրանց 79%-ը հետաքրքրված է շատ կամ մասամբ (տե՛ս գծապատկեր 2.1): Ըստ որում, կանանց և տղամարդկանց կարծիքները նշանակալիորեն տարբերվում են. թեև երբ երկու խումբն էլ

[9] Տվյալ հարցի համար առաջադրվել են մինչև 18 գործընթացներ (թե՛ երկրում, թե՛ տարածաշրջանում), որոնց վրա հարաբերությունների կարգավորումը հավանական ազդեցություն կունենա:

հավասարապես հետաքրքրված են կարգավորմամբ, տղամարդկանց 32%-ը շատ է հետաքրքրված, մինչդեռ կանանց ընդամենը 23%-ն է նույնչափ հետաքրքրված: Բացի դրանից, հետաքրքրվածության աստիճանը մեծանում է տարիքին զուգընթաց. հարցվածների 18-30 տարեկան խմբում շատ հետաքրքրված է եղել միայն 20%-ը, մինչդեռ 60 տարեկանն անց հարցվածների խմբում՝ 31%-ը (տե՛ս հավելված 1, գծապատկեր 7):

Գծապատկեր 2.1. Արդյոք հետաքրքրվա՞ծ եք հայ-թուրքական պաշտոնական հարաբերությունների կարգավորմամբ



Հարաբերությունների կարգավորմամբ հետաքրքրվածությունը մեծապես կապված է նաև կրթամակարդակի հետ (տե՛ս հավելված 1, գծապատկեր 8): Կարգավորմամբ շատ հետաքրքրվածությունն ամենացածրն է (20%) ոչ լրիվ միջնակարգ կրթությամբ և ամենաբարձրն է (32%) առնվազն բարձրագույն կրթությամբ հարցվածների շրջանում:

Նման վերլուծություն է իրականացվել նաև Թուրքիայի հետ սահմանակից և ոչ սահմանակից մարզերի համար: Ինչպես ցույց է տալիս հավելված 1-ի գծապատկեր 9-ը, Թուրքիային սահմանակից մարզերում բնակվող հարցվածներն, ընդհանուր առմամբ, ավելի շատ են հետաքրքրված կարգավորմամբ (32%), քան ոչ սահմանակից մարզերի հարցվողները (24%):

Հետաքրքիր է դիտարկել հարցվածների՝ հայ-թուրքական հարաբերությունների մասին տեղեկացվածության և նրանց հետաքրքրվածության աստիճանի կապը: Հարցվածների իրազեկվածությունն ավելի ցածր է, քան նրանց հետաքրքրվածությունը. փոխհարաբերությունների մասին բավականին կամ շատ տեղեկացված է եղել հարցվածների միայն 55%-ը՝ ի համեմատ դրանով որոշ չափով կամ շատ հետաքրքրվածների 79%-ի: Միաժամանակ, հայ-թուրքական հարաբերություններով ավելի շատ հետաքրքրվածությունն ուղեկցվել է դրանց մասին ավելի շատ իրազեկվածությամբ: Նման դրական կապը ակնհայտ է գծապատկեր 2.2-ից:

Գծապատկեր 2.2. Հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ տեղեկացվածության և հետաքրքվածության միջև կապը



Հարցվածների ճնշող մեծամասնության (73%) համար հայ-թուրքական հարաբերությունների մասին տեղեկատվության հիմնական աղբյուրը հեռուստատեսությունն է, իսկ 23%-ի համար՝ համացանցը: Եթե, հարցվածների 18-30 տարեկան խմբում հեռուստատեսությունից *հաճախ* օգտվում են 65%-ը, ապա այլ տարիքային խմբերում հեռուստատեսությունից *հաճախ* օգտվողների բաժինը հասնում է 75-76%-ի: Համացանցը տվյալ թեմայի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու առավել կիրառելի աղբյուր է 18-30 տարեկանների շրջանում (44%), մինչդեռ 60-ն անց հարցվածների միայն 8%-ն է այդ նպատակով օգտվում համացանցից:

Հարցվածներն, ընդհանուր առմամբ, ավելի շատ վստահարժան են համարել հայ-թուրքական հարաբերությունների մասին իրենց ընկերների, ընտանիքի, ծանոթների ու հարևանների (այսուհետ՝ սոցիալական ցանց), ինչպես նաև գիտնականների, հետազոտողների ու փորձագետների կարծիքները, ավելի քիչ վստահարժան՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներինը: Հարցվածների միայն 16-17%-ն է վստահարժան համարել Հայաստանի քաղաքական գործիչների կարծիքները (տե՛ս հավելված 1, գծապատկեր 10):

Վստահությունը շատ ավելի ցածր է Թուրքիայի համանման աղբյուրների կարծիքների նկատմամբ: Հարցվածների 83%-ը լիովին անվստահելի է համարել Թուրքիայի քաղաքական գործիչների, իսկ 73%-ը՝ փորձագետների, հետազոտողների, գիտնականների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կարծիքները: Հայաստանցիների անվստահությունը Թուրքիայում իրենց սոցիալական ցանցի հանդեպ գրեթե նույնքան է, որքան Թուրքիայի քաղաքական գործիչների հանդեպ (տե՛ս գծապատկեր 2.3): Այսպիսով, ակնհայտ է հայերի ցածր վստահությունը թուրքական հասարակության բոլոր դերակատարների հանդեպ:

Գծապատկեր 2.3. Հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ Թուրքիայում ու՞մ կարծիքներն են առավել վստահելի Ձեզ համար



Պատասխանելով այն հարցին, թե «Հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ տեղեկատվության մեջ ի՞նչն է Ձեզ առավել հետաքրքրում», հարցվածների 85%-ը Հայոց ցեղասպանության ճանաչումը նշել է որպես գլխավոր բաղադրիչ (գծապատկեր 2.4): Հայ-թուրքական սահմանի բացումը երկրորդ տեղում է (51%), իսկ երրորդը Թուրքիայի ազդեցությունն է Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործում (32%):

Գծապատկեր 2.4. Հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ տեղեկատվության մեջ ի՞նչն է Ձեզ առավել հետաքրքրում (նշել մինչև հինգ պատասխան)

3. Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորում

1993թ-ին Թուրքիան միակողմանիորեն փակել է Հայաստանի հետ սահմանը, և պաշտոնական դիվանագիտական բոլոր տեսակի հարաբերությունները խզվել են: Ներկայումս երկկողմ հարաբերությունների կարգավորումն ուղղակիորեն կապվում է սահմանի բացման հետ: Այդ պատճառով, հետազոտությունն ընդգրկել է այս խնդրի վերաբերյալ մի շարք հարցեր: Հարցվածների միայն 68%-ն է ճիշտ պատասխանել այն հարցին, թե ում նախաձեռնությամբ է փակվել հայ-թուրքական սահմանը: Նրանց զգալի մասը (25%) կարծում է, որ հայ-թուրքական սահմանի փակումը նախաձեռնել են երկու երկրները: Վերոնշյալ հարցին ճիշտ պատասխանողների թիվն աճում է տարիքի հետ. հարցին ճիշտ պատասխան է տվել (Թուրքիան է նախաձեռնել սահմանի փակումը) 60 տարեկանն անց հարցվածների 75%, իսկ 18-30 տարեկան հարցվածների՝ 54%-ը:

Հարցվածները որոշակիորեն հակադիր կարծիք են հայտնել սահմանի բացման մասին[10]: Ինչպես ցույց է տալիս գծապատկեր 3.1-ը, հարցվածների 51%-ը *լիովին (15%)* կամ *ավելի շուտ (36%) հավանություն* է տալիս, իսկ 33%-ը *բոլորովին կամ ավելի շուտ հավանություն չի տալիս* սահմանի բացմանը: Երկու բևեռների միջև կա նաև չեզոքների համեմատաբար փոքր խումբ, ինչը վկայում է, որ Հայաստանի հասարակությունը սահմանի բացման վերաբերյալ միակարծիք չէ:

Գծապատկեր 3.1. Որքանո՞վ եք հավանություն տալիս Հայաստանի և Թուրքիայի սահմանի բացմանը



Հարցվածները արտահայտել իրենց վերաբերմունքը նաև սահմանի բացմանն առանց նախապայմանների: «Որքանո՞վ եք հավանություն տալիս Հայաստանի և Թուրքիայի սահմանի բացմանն առանց նախապայմանների» հարցը առաջադրվել է միայն նրանց, ովքեր լիովին կամ մասամբ հավանություն են տվել կամ չեզոք են վերաբերել սահմանի բացմանն առհասարակ: Այլընտրանքային հարցը՝ «Որքանո՞վ եք հավանություն տալիս Հայաստանի և Թուրքիայի սահմանի բացմանը նախապայմաններով», ուղղվել է նույն հարցվածներին (դրական կամ չեզոք վերաբերմունք ունեցող): Հարկ է նշել, որ նրանք վերջին երկու հարցին պատասխանելու համար հարցվածներն ունեցել են նույն տարբերակները, ինչ այն հարցի դեպքում, երբ նախապայմաններ չեն նշվում ընդհանրապես: Ինչպես ցույց են տալիս է աղյուսակ 1-ի տվյալները, ընդհանուր առմամբ, նախապայմանների գործոնը՝ դրանցով կամ առանց դրանց, ավելի շատ անհամաձայնություն է առաջացրել: Հետաքրքիրն այն է, որ անհամաձայնությունը և չեզոքությունը (բոլորովին հավանություն չեմ տալիս, ավելի

[10]Հարցվողներին ուղղվել է հետևյալ հարցը. «Ասացեք խնդրեմ, որքանո՞վ եք հավանություն տալիս Հայաստանի և Թուրքիայի սահմանի բացմանը»:

շուտ հավանություն չեմ տալիս և ոչ տալիս եմ, ոչ չեմ տալիս) նշանակալիորեն ցածր է առանց նախապայմանների (43.3%), քան նախապայմաններով (91.1%) տարբերակի դեպքում:

Աղյուսակ 1. Ասացեք խնդրեմ, որքանո՞վ եք հավանություն տալիս Հայաստանի և Թուրքիայի սահմանի բացմանը

	Հարց 7, ընդհանուր առմամբ (n=1164)	ԿԲ 2010 (n=1922)	Սահմանի բացմանը դրական և/կամ չեզոք վերաբերմունք ունեցողների թվից, %		
			առանց նախապայմանների		նախապայման ներով
			Հարց 8 (n=786)	ԿԲ 2010 (n=1088)	Հարց 9 (n=562)
1	2	3	4	5	6
Լիովին հավանություն եմ տալիս	15.2	15.5	24.7	26.0	0.7
Ավելի շուտ հավանություն եմ տալիս	35.5	26.0	24.8	29.0	2.1
Դրական վերաբերմունքի ենթագումար	***50.7***	***41.5***	***49.5***	***55.0***	***2.8***
Ոչ տալիս եմ, ոչ չեմ տալիս	15.0	12.1	15.3	20.2	8.2
Ավելի շուտ հավանություն չեմ տալիս	10.5	12.4	13.0	8.8	8.9
Բոլորովին հավանություն չեմ տալիս	22.0	30.6	15.0	10.4	74.0
Բացասական և չեզոք վերաբերմունքի ենթագումար	***47.5***	***55.1***	***43.3***	***39.4***	***91.1***
Չգիտեմ	1.8	3.2	7.3	5.7	6.0

Քանի որ Կովկասյան բարոմետրը 2010թ-ին հարցրել էր՝ «Որքանո՞վ եք հավանություն տալիս Հայաստանի և Թուրքիայի սահմանի բացմանը», հարկ է դիտարկել՝ արդյոք փոխվել է վերաբերմունքը վերջին չորս տարիների ընթացքում: Հատկանշական է, որ սահմանի բացմանը հավանություն չտվածների բաժինը 2014թ-ին նկատելիորեն ավելի քիչ է (33%), քան 2010թ-ին (45%): Այդուհանդերձ, առանց նախապայմանների սահմանի բացմանն անհամաձայնությունը 2014թ-ին (43.3%) աննշանորեն է տարբերվել 2010թ-ի Կովկասյան բարոմետրի 39.4% ցուցանիշից (տե՛ս աղյուսակ 1):

Սահմանի բացմանը հավանություն տալու և հարցվողների կրթական աստիճանի միջև դիտվում է դրական (տե՛ս գծապատկեր 3.2), բայց ոչ նշանակալի կապ[11]: Սահմանի բացմանը լիովին հավանություն տվածների բաժնի տարբերությունը ամենաբարձր և ամենացածր կրթամակարդակ ունեցող հարցվածների միջև ավելի քան 9 տոկոսային կետ է (21% և 12%, համապատասխանաբար):

[11] Փիրսոնի խի-քառակուսու վիճակագրական P արժեքը 0.371 է:

Գծապատկեր 3.2. Վերաբերմունքը Հայաստանի և Թուրքիայի սահմանի բացմանն ըստ հարցվածների կրթամակարդակի



Վերջապես, համեմատելով սահմանի բացմանը հավանություն տալու ցուցանիշն ըստ մարզերի՝ պարզվել է, որ Թուրքիային սահմանակից մարզերի բնակիչներն առավել հետաքրքրված են սահմանի բացմամբ, քան այդ երկրի հետ սահման չունեցող մարզերինը (տե՛ս գծապատկեր 3.3)[12]:

Գծապատկեր 3.3. Վերաբերմունքը Հայաստանի և Թուրքիայի սահմանի բացմանն ըստ հարցվածների բնակավայրի



Աղյուսակ 2-ը ցույց է տալիս, որ Հայաստանի բնակչությունն շարունակում է լավատեսորեն գնահատել սահմանի բացման հավանական ազդեցությունը: Այսպես, 2014թ-ին հարցվածների 64%-ը և 2012թ-ին հարցվածների 61%-ը հավատացած է եղել, որ Թուրքիայի հետ սահմանի բացումը դրական ազդեցություն կունենա Հայաստանի

[12] Շատ հետաքրքրված հարցվածների համար տարբերությունը 7.6% է, իսկ ընդհանուր փոփոխությունը նշանակալի է 10%-ի մակարդակում:

տնտեսության վրա: Ավելին, 2014թ-ին 2012թ. համեմատ նվազել է այն ռեսպոնդենտների տեսակարար կշիռը, ովքեր ասել են, թե սահմանի բացումը կվնասի Հայաստանի տնտեսությանը, քաղաքականությանը կամ անվտանգությանը:

Աղյուսակ 2. Հայ-թուրքական սահմանի բացման ազդեցությունը Հայաստանի...

(Հայաստան-Թուրքիա 2014թ. և Կովկասյան բարոմետր 2012թ. հարցումների համեմատական տվյալներ)

	Տնտեսության վրա		Ներքաղաքական գործընթացների վրա		Երկրի անվտանգություն վրա	
	2014թ.	ԿԲ 2012	2014թ.	ԿԲ 2012	2014թ.	ԿԲ 2012
Կվնասի	21%	33%	37%	53%	**57%**	**64%**
Չի ազդի	15%	6%	40%	16%	28%	16%
Օգուտ կտա	**64%**	61%	23%	31%	15%	20%

Այնուհետև դիտարկվել է, թե սահմանի բացմանը հավանություն տվողները որքանով են կարևորում տնտեսական հարաբերությունները: Փորձ է արվել նաև պարզելու, թե արդյոք սահմանի բացմանը դեմ հարցվողներն ավելի մտահոգ են ոչ տնտեսական (անվտանգություն) գործոններով, օրինակ Ցեղասպանությանը և Լեռնային Ղարաբաղին առնչվող հարցերով: Եթե դա այդպես է, ապա սահմանի բացմանը լիովին հավանություն տվածները պետք է գերակշռեն բոլորովին հավանություն չտվածներին, մասնավորապես, երբ սահմանի բացումը կապվում է տնտեսության հետ: Նաև ակնկալվում էր հակադարձ կապ, երբ սահմանի բացումը կապվում է անվտանգության հետ: Ենթադրությունները լիովին համընկնում են հարցման արդյունքների հետ (տե՛ս գծապատկեր 3.4):

Գծապատկեր 3.4. Սահմանի բացման հնարավոր ազդեցությունը տնտեսության ու անվտանգության վրա



Չնայած հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ազդեցությունը երկու երկրների տնտեսության, անվտանգության և այլ ոլորտների վրա մասամբ գնահատվել է դրական՝ հարցվածների մեջ դեռևս կա մի մեծ շերտ, որը կարգավորումից որևէ էական փոփոխություն չի ակնկալում:

Տնտեսության վրա սահմանի բացման ազդեցության հետագա վերլուծությունը ցույց է տալիս, որ ավելի բարձր կրթություն ունեցող հարցվածներն ազդեցությունն առավել դրական են գնահատում (տե՛ս գծապատկեր 3.5): Դրական կապը շատ նշանակալի է[13]:

[13] P արժեքը 0.016 է:

Գծապատկեր 3.5. Տնտեսության վրա սահմանի բացման ազդեցության գնահատականն ըստ հարցվողների կրթության



Հատկանշական է, որ հարցվածները, ովքեր կարծում են, որ սահմանի բացումը դրական ազդեցություն կունենա անվտանգության վրա, ավելի մեծ բաժին ունեն Թուրքիային սահմանակից մարզերում՝ ի համեմատ Թուրքիայի հետ սահման չունեցող մարզերում հարցվածների (տե՛ս գծապատկեր 3.6): Սա շատ հետաքրքիր բացահայտում է և հետագա վերլուծության կարիք ունի:

Գծապատկեր 3.6. Սահմանի բացման ազդեցությունն անվտանգության վրա. տարբերություններն ըստ մարզերի



Ըստ հարցվածների բնակավայրի (Թուրքիային սահմանակից կամ ոչ)՝ տնտեսության վրա սահմանի բացման ազդեցության գնահատականների միջև նշանակալի կապ չբացահայտվեց: Էական տարբերություններ չկան նաև անվտանգության վրա սահմանի բացման ազդեցության դիրքորոշումների միջև՝ ըստ հարցվածների կրթամակարդակի:

Գալով հարաբերությունների կարգավորման հավանական ազդեցությանը ներկայիս մի շարք գործընթացների վրա, ապա ինչպես ցույց են տալիս աղյուսակ 3-ի

տվյալները, հարցվածները կարծում են, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը մեծապես կազդի երկու երկրների միջև առևտրատնտեսական համագործակցության, ինչպես նաև Հայաստանի միջազգային առևտրի վրա: Առհասարակ, տնտեսական գործոններն առաջին տեղում են, սակայն Ցեղասպանությունը և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը նույնպես դիտարկվում են որպես կարգավորման ազդեցության գործոններ:

Աղյուսակ 3. Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ազդեցությունը հետևյալ գործընթացների վրա

	Դրական	Ոչ մի	Բացասական
Թուրքիա-Հայաստան առևտրատնտեսական համագործակցություն	81	12	7
Հայաստանի միջազգային առևտրի բարելավում	73	19	8
Թուրքիայի՝ Եվրոպական Միության անդամ դառնալու գործընթաց	65	26	9
Թուրքական տնտեսական/ֆինանսական կապիտալի ներհոսք դեպի Հայաստան	62	25	13
Հայաստանի արդյունաբերության զարգացում	56	30	14
Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչում	52	32	16
Հայաստանի գյուղատնտեսության զարգացում	49	36	15
Թուրքիայի արևելքում տնտեսության, կրթության, առողջապահության և այլ ոլորտների զարգացում	44	46	10
Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորում	41	35	24
Հայաստանի եվրաինտեգրման գործընթաց	39	50	11
Տարածաշրջանային կայունություն	36	29	35
Հայաստան-Ռուսաստան հարաբերություններ	26	61	13
Ռուսաստան-Թուրքիա հարաբերություններ	26	63	11
Թուրքիայից Հայաստան ներգաղթ	25	52	23
Հայաստանի արտաքին անվտանգություն	25	31	44
Հայաստան-Վրաստան հարաբերություններ	24	67	9
Տարածաշրջանում Իրանի դիրք	16	65	19
Հայաստանից Թուրքիա արտագաղթ	16	44	40

Ինչպես արդեն նշվել է, 2009թ. հոկտեմբերի 10-ին, Ցյուրիխում Հայաստանը և Թուրքիան ստորագրել են հայ-թուրքական արձանագրություններ: Հարցվածների 58%-ը ծանոթ չէ արձանագրությունների բովանդակությանը, և միայն 2%-ն է ամբողջությամբ կարդացել փաստաթուղթը: Այդուհանդերձ, հարցվածների նշանակալի մասը (46%) գործընթացի կասեցումը գնահատել է բացասական, և միայն 19%-ը՝ դրական (տե՛ս գծապատկեր 3.7):

Գծապատկեր 3.7. Հարցվածների վերաբերմունքը 2009թ. ստորագրված հայ-թուրքական արձանագրությունների կասեցմանը



4. Վերաբերմունք Թուրքիայի հանդեպ

Այս մասում խմբավորված հարցերը նպատակ ունեն բացահայտել հայաստանցիների վերաբերմունքը հարևան երկրի հանդեպ: Առաջին հարցով պարզվել է, թե որքանով են հարցվածները ծանոթ Թուրքիային. հարցվածների 13%-ը շփում է ունեցել թուրքերի հետ, իսկ 6%-ը եղել է Թուրքիայում: Թուրքիա այցելելու նրանց հիմնական նպատակը եղել է հանգիստը, զբոսաշրջությունը (47%), ապա՝ առևտուրը (25%): Հայաստանցիների 80%-ն օգտագործում է թուրքական ապրանքներ: Ըստ որում, տարեցները (60 տարեկան և ավելի) միջինի համեմատ ավելի քիչ են օգտագործում (67%) Թուրքական ապրանքներ: Առհասարակ, Թուրքական ապրանքների ներկրման հանդեպ վերաբերմունքը չեզոք է[14]:

Գծապատկեր 4.1-ի տվյալներն արտահայտում են հարցվածների վերաբերմունքը թուրքերի և նրանց հետ հնարավոր համագործակցության նկատմամբ: Ըստ հետազոտության արդյունքների, Թուրքիայի պաշտոնական քաղաքականությունը և թուրք ժողովրդի դիրքորոշումը ոչ միշտ է ընկալվել որպես նույնական: Տարբեր է նաև Հայաստանի տնտեսության համար թուրքական ապրանքների ներմուծման կարևորության ընկալումը: Միաժամանակ, հարցվածների ճնշող մեծամասնությունը լիովին համաձայնել է, որ Թուրքիային չի կարելի վստահել, և որ Թուրքիան Հայաստանի և Ղարաբաղի հանդեպ թշնամական քաղաքականություն է իրականացնում: Սա, թերևս ցույց է տալիս, որ փոխհարաբերությունների որոշակի ոլորտներ շարունակում են մնալ խրթին, և հասարակությունների հաշտեցումը պահանջում է լարված և երկարաժամկետ ջանքեր: Հարցվածների կեսը լիովին կիսել է այն տեսակետը, որ վերջին տասը տարիների ընթացքում Թուրքիան տնտեսապես զարգանում է:

[14] Եթե վերաբերմունքը տարակարգենք շատ բացասականից (=1) մինչև շատ դրական (=5) և հաշվենք կշռված միջինը, ապա կստացվի մոտ 3.1:

Գծապատկեր 4.1. Որքանո՞վ եք համաձայն Թուրքիայի և թուրք ժողովրդի վերաբերյալ հետևյալ դատողությունների հետ



Հետաքրքիր է պարզել, թե ինչ են մտածում հարցվածները հայերի հանդեպ թուրք ժողովրդի ընդհանուր վերաբերմունքի մասին: Այս հարցը տրվել էր նաև 2010թ. Կովկասյան բարոմետրի հետազոտությամբ: Չնայած համեմատաբար կարճ ժամանակահատվածին՝ այդ հարցի հանդեպ հայաստանցիների ընկալումներում նկատելի փոփոխություն կա. 2010թ-ին հարցվածների 30%-ից ավելին Թուրքիայի բնակչության վերաբերմունքը հայերի նկատմամբ գնահատել էին լիովին բացասական, մինչդեռ այս հարցման շրջանակներում հարցվածների միայն 20%-ն է այդպես գնահատել[15]: Համապատասխանաբար, հայերի հանդեպ թուրք ժողովրդի վերաբերմունքի չեզոք և դրական գնահատականները 2014թ. ավելի բարձր են եղել: Բացահայտումները ներկայացված են գծապատկեր 4.2-ում:

[15] Թեև 2010թ. Կովկասյան բարոմետրով և ներկա հետազոտությամբ հարցվածները նույն անձինք չեն, ընտրանքի մեթոդաբանության և տարածքային ընդգրկման նույնականությունը հնարավոր են դարձնում համեմատությունները դինամիկայում:

Գծապատկեր 4.2. Թուրքիայի բնակչության ընդհանուր վերաբերմունքը հայերի նկատմամբ



Ներկա հետազոտությամբ և 2010թ. Կովկասյան բարոմետրով հավաքագրված տվյալների համադրությունը (տե՛ս հավելված 1, գծապատկեր 12) ցույց է տալիս, որ հարցվածների մեծ մասը (2010թ-ին՝ 56%-ը և 2014թ-ին՝ 60%-ը) հավանություն է տվել թուրքերի հետ բիզնես անելուն, մինչդեռ խառն ամուսնությունները շատ քչերի (2010թ-ին՝ 8%-ի և 2014թ-ին՝ 5%-ի) հավանությանն են արժանացել:

Հայաստանցիների վերաբերմունքը Թուրքիայի հնարավոր անդամակցությանը Եվրոպական Միությանը դրական փոփոխություն է կրել. եթե 2010թ-ին Կովկասյան բարոմետրով հարցվածների 46%-ն է լիովին բացասական վերաբերմունք արտահայտել այդ հարցում, ապա 2014թ-ին հարցվածների շրջանում այդ ցուցանիշը կազմել է 28% (տե՛ս հավելված 1, գծապատկեր 14): Համապատասխանորեն, այս հարցում չեզոք դիրքորոշում ունեցածների բաժինն աճել է և 2014թ. կազմել 45%՝ 2010թ. 26%-ի դիմաց: Եվրամիությանն անդամակցելու համար Թուրքիայի առջև դրվող պահանջների վերաբերյալ հայաստանցիների կարծիքը վերջին չորս տարիներին գրեթե չի փոխվել (տե՛ս հավելված 1, գծապատկեր 15):

5. Հայոց ցեղասպանության ճանաչում և հիշատակման վարքագիծ

2015թ-ին Հայաստանը հիշատակում է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: Այս նկատառումով հետազոտությունն ընդգրկել է Ցեղասպանության մասին գիտելիքների, ճանաչման և հիշատակման վարքագծի վերաբերյալ հարցերի խումբ:

Հարցվածների մոտ 85%-ը Հայոց ցեղասպանության մասին առաջին անգամ լսել է մինչև 11 տարեկան դառնալը (որոնցից 36%-ը լսել է մինչև 7 և 47%-ը՝ 8-11

տարեկանում)[16]: Հարցվածների 70%-ի մոտ Ցեղասպանության մասին գիտելիքները ձևավորվել են ընտանիքում, իսկ 62%-ի մոտ՝ դպրոցում[17]: Հարկ է նշել, որ հարցվածների 54%-ի նախնիներն այս կամ այն կերպ տուժել են Հայոց ցեղասպանությունից (տեղահանվել են Թուրքիայից կամ նահատակվել): ԿԲ 2012թ. և ՌԱՀՀԿ 2005թ. հարցումներում նախնիների կորուստների մասին նշել են հարցվածների մոտ 48%-ը (տե՛ս հավելված 1, գծապատկեր 16): Հարցվածների 87%-ն ասել է, որ մասնակցում է Ցեղասպանության հիշատակմանը նվիրված միջոցառումների (օրինակ՝ այցելություն Ծիծեռնակաբերդ), որոնցից 27%-ը դա անում է ամեն տարի:

«Ձեր կարծիքով, ի՞նչն է ցեղասպանությունների պատճառը» հարցի առաջադրված պատասխաններից ամենից ավելի հաճախ (մոտ 40%) ընտրվել է հետևյալը. «ազգային մեծամասնությունը ցանկանում է հաստատել ազգային պետություն, իսկ փոքրամասնությունները պայքարում են անկախության համար և առաջացնում հակազդեցություն»: Ըստ երկրորդ տարածված (39%) կարծիքի «ազգային մեծամասնությունների քաղաքական գործիչները ատելություն են սերմանում դեպի ազգային փոքրամասնությունները»:

Հարցվածների 96%-ը հաստատել է, որ եթե Հայոց ցեղասպանությունը ճանաչվի, ապա հավանություն կտա, որ Հայաստանի կառավարությունը և/կամ սփյուռքը հատուցում պահանջեն Թուրքիայից: Հարցման մասնակիցներին խնդրել են դասակարգել հատուցման հնարավոր ձևերն ըստ առաջնայնության: Գծապատկեր 5.1-ը ցույց է տալիս, որ Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչումն ամենաառաջնային գործողությունն է, որն ակնկալվում է Թուրքիայից (բոլոր պատասխանների 42%-ում այն ամենակարևորն է համարվել): Պատասխանների 28%-ում հատուցման ամենակարևոր ձև է համարվել հայ ազգի տարածքային իրավունքի վերականգնումը (տարածքների վերադարձը):

[16] 2005թ-ին ՀՀ 1900 քաղաքացիների շրջանում ՌԱՀՀԿ-ի անցկացրած հարցման նույն հարցի պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ. 38.6%-ը չի հիշել՝ քանի տարեկանում է առաջին անգամ լսել Հայոց ցեղասպանության մասին, 24.2%-ը տեղեկացել է մինչև 7 տարեկան հասակում, 18%-ը՝ 8-11 տարեկանում, և 14%-ը՝ 12-17 տարեկանում (տե՛ս http://acnis.am/old/pr/genocide/Socio13eng.pdf, էջ 4):

[17] Հարցվողները հնարավորություն են ունեցել ընտրելու մինչև երկու պատասխան տասից ավելի տարբերակներից՝ ներառյալ սփյուռքի գործունեությունը: Եթե ընտրված բոլոր պատասխաններն ընդունենք որպես 100%, ապա կստացվի, որ պատասխանների 45%-ը «ընտանիքն» է, 39.7%-ը՝ «դպրոցը», 5.2%՝ «ֆիլմերը» և 5.3%-ը՝ «գրականությունը»:

Գծապատկեր 5.1. Ինչպիսի՞ հատուցում եք ակնկալում Թուրքիայից

(ըստ առաջնայնության ամենահաճախ նշված առաջին պատասխանը)

Գծապատկեր 5.2-ն ամփոփում է «Ինչի՞ ազդեցությամբ Թուրքիան կճանաչի Հայոց ցեղասպանությունը» հարցի պատասխանները: Հայաստանցիները մեծ հավատ չունեն, որ Թուրքիան կճանաչի Ցեղասպանությունը Հայաստանի կառավարության կամ սփյուռքի ճնշմամբ: Հակառակը, Թուրքիայի կողմից Ցեղասպանության ճանաչման հարցում նրանք առավել արդյունավետ են համարում միջազգային ճնշումը, ինչպիսին են Եվրամիություն մտնելու նախապայմանը կամ ճնշումը տարբեր երկրների (ՌԴ, ԱՄՆ) կողմից:

Գծապատկեր 5.2. Ըստ Ձեզ, ի՞նչի ազդեցությամբ Թուրքիան կճանաչի Հայոց ցեղասպանությունը (մինչև երեք պատասխան)

Հարցվածներից ճշտվել է՝ արդյոք նրանք հավատում են, որ Թուրքիան կճանաչի Հայոց ցեղասպանությունը առաջիկա 5-10 տարիների ընթացքում: Նրանց 65%-ը դեպքերի նման զարգացումը համարել է բոլորովին կամ ավելի շուտ անհնար: Միայն 9%-ն է դա համարել շատ հնարավոր:

6. Հայ-թուրքական հաշտեցման խնդիրներ

Այս մասում ներառվել են մի շարք հարցեր, որոնք վերաբերում են հայ-թուրքական հաշտեցման ուղիներին և մարտահրավերներին: Հարցումն անդրադարձել է հաշտեցման գործընթացում նախապայմանների դերին և/կամ հայկական կողմի զուգահեռ քայլերին: Հարցվածների մեծամասնությունը (55%) կողմ է եղել հարաբերությունների հաստատմանը, սակայն հետապնդելով Ցեղասպանության ճանաչումը: Հարցվածների 17%-ը նախընտրել է հարաբերությունների հաստատումը նախապայմաններով՝ Արցախի անկախության ճանաչում, շրջափակման վերացում և այլն (տե՛ս հավելված 1,

գծապատկեր 17): Պատկերը շատ չի փոխվում՝ կախված հարցվածների տարիքից և սեռից:

Հարցվածներից հստակեցվել է, թե որ ոլորտներում Հայաստանը պետք է հարաբերություններ հաստատի Թուրքիայի հետ (տե՛ս հավելված 1, գծապատկեր 18): Այս հետազոտության այլ արդյունքների նման, այս հարցում ևս տնտեսական հարաբերություններին մեծ տեղ է տրվել (62%): Հաջորդ ոլորտը քաղաքականն է (37%) համարվել, ինչը վկայում է, որ հարցվածները քաջատեղյակ են քաղաքականության կենտրոնական դերի մասին կամ, որ այն խիստ ազդում է հայ-թուրքական հարաբերությունների բոլոր ոլորտների վրա: Հատկանշական է, որ հարցվածների մեկ հինգերորդը համագործակցությունը հնարավոր է համարել *բոլոր* ոլորտներում:

ՌԱՀՀԿ-ի 2005թ. հետազոտությամբ հարցվածներին տրված համանման մի հարցի՝ «Թուրքիայի հետ ինչպիսի՞ հարաբերություններ պետք է հաստատի Հայաստանը», պատասխանները բաշխվել են հետևյալ հերթականությամբ. դիվանագիտական (45.6%), տնտեսական (21.9%), մշակութային (1.4%), ռազմական (2.1%), համապարփակ-ամբողջական (12.1%), ոչ մի (14.8%) և դժվարանում եմ պատասխանել (2.4%):

Եթե համեմատենք այս երկու հարցերը[18]՝ սևեռվելով հիմնական պատասխանների վրա («տնտեսական» ու «քաղաքական»՝ Հայաստան-Թուրքիա (2014թ.) հարցումից և «տնտեսական» ու «դիվանագիտական»՝ ՌԱՀՀԿ հարցումից), ապա կարելի է եզրակացնել, որ, ի տարբերություն 2005-ի, ներկայիս հայաստանցիները տնտեսական հարաբերություններն ավելի են կարևորում, քան դիվանագիտականը: Սակայն համեմատելիս հարկ է հաշվի առնել, որ վերջին հարցման մեջ կարելի էր նշել բոլոր հնարավոր տարբերակները, իսկ ՌԱՀՀԿ-ի հարցման մեջ մեկ պատասխանի հնարավորություն է եղել: Ինչևէ, նշանակալիորն աճել է մշակութային հարաբերությունների կարևորությունը՝ 1.4% ից (2005թ.) հասնելով 8%-ի (2014թ.):

Սա ցույց է տալիս, որ ներկայումս հայաստանցիներն ավելի քիչ են արժևորում քաղաքականության դերը և կարծում են, որ տնտեսական ու մշակութային փոխհարաբերություններն ավելի կարևոր են: Հարցվողներն ավելի շատ են կարևորել տնտեսությունը, քան քաղաքականությունը (համապատասխանաբար 27% և 16%՝ ըստ բոլոր պատասխանների) (տե՛ս գծապատկեր 6.1):[19] Ուստի, կարելի է պնդել, որ ժամանակակից հայաստանցիները մտածում են, որ հնարավոր է զարգացնել տնտեսական և մշակութային կապերը առանց քաղաքականության: Այս դիտարկումը հաստատում է այն վարկածը, որ անմիջական տնտեսական (և մշակութային) հարաբերությունները կարող են արդյունավետ համարվել առանց դիվանագիտական հարաբերությունների հաստատման:

---

[18] Հայաստան-Թուրքիա (2014) հարցումից «Թուրքիայի հետ ո՞ր ոլորտներում պետք է հարաբերություններ հաստատի Հայաստանը:» և ՌԱՀՀԿ (2005) հարցումից «Թուրքիայի հետ ինչպիսի՞ հարաբերություններ պետք է հաստատի Հայաստանը» հարցերը:

[19] Ըստ հավելված 1-ի գծապատկեր 18-ի, հարցվածների 62%-ը նշել է տնտեսության կարևորությունը, մինչդեռ քաղաքականությունը կարևորել է 37%-ը: Երկու արդյունքները ստացվել են նույն հարցից: Գծապատկեր 6.1-ում տարբերակները հաշվարկված են ըստ բոլոր պատասխանների, իսկ հավելված 1-ի գծապատկեր 18-ում յուրաքանչյուր տարբերակ հաշվարկված է առանձին:

Գծապատկեր 6.1. Թուրքիայի հետ ո՞ր ոլորտներում պետք է հարաբերություններ հաստատի Հայաստանը (տոկոս բոլոր պատասխաններում)



Հարցվածներն արտահայտել են իրենց վերաբերմունքը երկու երկրների քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից իրականացվող հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված ծրագրերի հանդեպ: Նրանց 56%-ը դրական, իսկ 40%-ը չեզոք է վերաբերում նման ծրագրերին: Սա ակնհայտորեն ցույց է տալիս, որ կարգավորմանն ուղղված ծրագրերն, անկասկած, սպասված են և կարող են օգնել հարաբերությունների կարգավորման գործընթացին: Հարցվածները նաև պատասխանել են «Հետևյալ քայլերից որի՞ն հավանություն կտայիք, որ կարող է իրականացնել քաղաքացիական հասարակությունը հայ-թուրքական հաշտեցման գործում» հարցին, որի արդյունքներն ամփոփված են գծապատկեր 6.2-ում:

Գծապատկեր 6.2. Հետևյալ քայլերից որի՞ն հավանություն կտայիք, որ իրականացներ քաղաքացիական հասարակությունը հայ-թուրքական հաշտեցման գործում (բազմակի պատասխաններ)



Կարևոր շատ բաղադրիչներ ուղղված են Հայոց ցեղասպանության հետևանքներին, իսկ որոշներն ունեն զուտ տնտեսական բնույթ: Այսպես, «նպաստել բիզնեսի հեշտացմանն ու զարգացմանը» կամ «նպաստել զբոսաշրջության զարգացմանը» հաճախ նշված այն քայլերն են, որ հարցվողները կցանկանային, որ իրականացներ քաղաքացիական հասարակությունը:

Հարցաթերթում տեղ է գտել նաև հարց հայ-թուրքական հարաբերությունների վրա Ադրբեջանի ազդեցության մասին: Հարցվածների ավելի քան 80%-ը համոզմունք է հայտնել, որ այդ ազդեցությունը շատ մեծ է՝ ամրապնդելով այն փաստարկը, որ Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունները մեծապես կախված են երրորդ երկրից, ինչը կարգավորման գործընթացն ավելի է բարդացնում:

Ի վերջո, հարցվածները պատասխանել են հարցին, թե «արդյոք հայ և թուրք ժողովուրդները կհաշտվե՞ն»: Պատասխանները միանշանակ չեն. հարցվածների 30%-ը հավատացած է եղել, որ նրանք երբեք չեն հաշտվի, մինչդեռ 40%-ը հավանական է համարում հաշտեցումը: Սա տեղ է բացում հանրային քաղաքականության միջամտության և բնակչության կարծիքն այն ցանկալի ուղղությամբ տանելու համար, որն ավելի ներկայացուցչական է և տիպիկ:

Հավելված 1-ի աղյուսակ 4-ը օգտակար տեղեկատվություն է տրամադրում Ցեղասպանության նկատմամբ Թուրքիայի բնակչության վերաբերմունքի մասին: Հանրային կարծիքի հարցումն անցկացվել է Տնտեսական և արտաքին քաղաքականության հետազոտությունների կենտրոնի (ՏԱՔՀԿ-EDAM, Թուրքիա) կողմից,

2014թ-ին: Թուրքիայի 1508 քաղաքացիների շրջանում անցկացված հարցման մասնակիցների միայն 9%-ն է նշել, որ Թուրքիան պետք է ներողություն հայցի 1915թ-ին հայերի կոտորածի համար և ընդունի ցեղասպանությունը: Մեկ այլ 9%-ը համարել է, որ Թուրքիան պետք է ներողություն խնդրի, բայց ոչ մի այլ քայլ չանի: Հարցվածների 12%-ի կարծիքով Թուրքիան պետք է ափսոսանք հայտնի 1915թ-ին հայերի կոտորածի համար, բայց ներողություն չհայցի: Հարցվածների 24%-ը ընտրել է այն պատասխանը, ըստ որի 1915թ-ին ոչ միայն հայերն են կոտորվել և որ պետք է սգալ Օսմանյան կայսրությունում ջարդի ենթարկված բոլոր քաղաքացիների համար: Վերջապես, հարցվածների 21%-ը գտել է, որ Թուրքիան չպետք է որևէ քայլ կատարի: Երիտասարդ հարցվածները (18-34 տարեկան) առավել հակված են եղել արտահայտելու իրենց զղջումը: Սակայն նշանակալի տարբերություն չկա տղամարդկանց և կանանց կարծիքների միջև: Հետաքրքիր է, որ հարցվածների մեկ քառորդը չի ցուցաբերել որևէ վերաբերմունք, ինչը թերևս վկայում է քաղաքականության մեջ առկա որոշակի բացերի մասին:

7. Հիմնական բացահայտումներ և հանրային քաղաքականության առաջարկներ

Ընդհանուր առմամբ, հարցվածների հետաքրքրությունը և վերաբերմունքը հայ-թուրքական հարաբերությունների նկատմամբ նշանակալի է և հստակ արտահայտում է իրականությունը: Ընդհանուր պատկերն այնպիսին է, որ ավելի մեծ տարիքի հարցվածներն ավելի շատ են հետաքրքրված հարաբերություններով, սակայն 18-45 տարեկան հարցվողների մեծամասնությունը նույնպես արտահայտել է որոշակի հետաքրքրություն: Չնայած պատճառահետևանքային կապերի վերլուծություն չի իրականացվել, բացահայտվել է հետաքրքրվածության և տեղեկացվածության միջև առկա նշանակալի կապը. հայ-թուրքական հարաբերությունների մասին խիստ հետաքրքրվածները գտնում են հասանելի տեղեկատվություն և բարձրացնում իրենց իրազեկվածությունը:

Հայ-թուրքական հարաբերությունների մասին հարցվածների կարծիքի ձևավորման աղբյուրների մեջ գերակշռել են հետազոտությունների և փորձագիտական կարծիքների վրա հիմնված տեղեկատվական աղբյուրները: Հանրային քաղաքականության տեսանկյունից, այս հիմնահարցի վերաբերյալ անկախ և անկողմնակալ հետազոտություններում ու փորձագիտական ուսումնասիրություններում ներդրումները կնպաստեն հանրային կարծիքի մղմանը սոցիալապես ավելի արդյունավետ ուղղությամբ: Հայաստանցիները նախընտրում են հետևել երկու երկրների փոխհարաբերությունների վերաբերյալ հետազոտողների և փորձագետների կարծիքներին: Սա հեշտ հասանելի ռեսուրս է և կարող է օգտագործվել որոշում կայացնողների կողմից: Քանի որ գիտելիքը փոխակերպում է գործընթացը, համապատասխան քաղաքական ջանքեր են անհրաժեշտ՝ հետազոտական արդյունքները հասարակության լայն շրջանակներին հասանելի դարձնելու ուղղությամբ: Արտաքին քաղաքականության համար պատասխանատու հանրային կառույցների

(Արտաքին գործերի նախարարություն, Սփյուռքի նախարարություն և այլն) և հետազոտական հաստատությունների միջև համատեղ ու համակարգված նախաձեռնությունները կնպաստեն գործընթացին:

Ըստ հետազոտության տվյալների, հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում խիստ կարևորվում է Ցեղասպանության և Ղարաբաղյան հակամարտության մասին տեղեկատվությունը: Երկու երկրների տնտեսական ու դիվանագիտական հարաբերությունների մասին տեղեկատվությունը նույնպես պահանջարկված է: Առհասարակ, հայ-թուրքական հարաբերությունների օրակարգը ոչ միայն հարուստ է, այլ նաև ընդգրկում է կարգավորման գործընթացը բարդացնող վիճելի հարցեր: Անվտանգության նկատառումները և Ցեղասպանությունը հարցվողներին ետ են պահում հարաբերությունների կարգավորմանը հավանություն տալուց, մինչդեռ տնտեսական գործոնները նրանց դրդում են հավանություն տալ գործընթացին: Նույն հարցվողը հավանություն չի տալիս սահմանի բացմանը, երբ գնահատում է դրա ազդեցությունը երկրի անվտանգության վրա, և հավանություն է տալիս՝ գնահատելով տնտեսական ազդեցությունը: Առանց նախապայմանների կարգավորումը չի թուլացնում անվտանգության մտահոգությունները, սակայն առնվազն կարող է ձևականորեն բացառել այս երկուսի անմիջական կապը պաշտոնապես հայտարարած քաղաքականության մեջ: Ակնհայտ է, որ հարցվածները քաջ գիտակցում են սահմանի բացման հետևանքով Հայաստանի սպասվող տնտեսական զարգացման համար վճարվող գինը: Հայ-թուրքական արձանագրությունները, որոնք նախաստորագրվել են 2009թ.-ին, նախատեսում էին արդյունավետորեն վերահսկել նշյալ երկու գործոնների տարանջատումը:

Դիտարկումը, որ հարցման մասնակիցները նշանակալիորեն հետաքրքրված են երկկողմ կարգավորմամբ, ենթադրում է, որ ՀՀ կառավարությունը պետք է շարունակի ժամանակ ու ջանքեր ներդնել Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերություններ հաստատելու համար: Մարդիկ գիտակցում են, որ փակ սահմանները և դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը խոչընդոտում են Հայաստանի զարգացմանը: Երկկողմ հարաբերություններով հետաքրքրվածությունը բարձր է տարեց հարցվողների մոտ: Սակայն 60 տարեկանն անց քիչ հարցվողներ են դրական գնահատում կարգավորման ազդեցությունը տնտեսական զարգացման վրա, ինչը ցույց է տալիս, որ բարձր տարիքի հարցվողների շրջանում հետաքրքրվածությունը պայմանավորված չէ տնտեսական գործոններով: Որոշում կայացնողների համար լավ արդյունք է այն, որ կարգավորմամբ հետաքրքրվածությունը բարձր է բոլոր տարիքային խմբերում և պաշտոնական որոշումները դրանց իրագործումից առաջ կարող են քննարկվել ողջ հասարակության հետ (քանի որ հատվածականություն չկա):

Հարցման արդյունքում պարզվել է, թե նախապայմանների առաջադրումը որքանով է փոխում հարցվածների վերաբերմունքը սահմանի բացման նկատմամբ: Երբ նշվում են նախապայմանները (դրանցով կամ առանց դրանց), հարցվողների մի մասը, ովքեր հավանություն են տվել սահմանի բացմանն առանց նախապայմանի, դեմ են արտահայտվել սահմանի բացմանը: Անհամաձայնությունն ավելի մեծ է

նախապայմաններ առաջադրելու դեպքում, ինչը ցույց է տալիս, որ հայաստանյան հասարակության համար կարգավորման գործընթացն ավելի ընդունելի է առանց նախապայմանների:

Առանց նախապայմանների կարգավորումն, այդուհանդերձ, չի նշանակում, որ այս գործընթացում Հայոց ցեղասպանությունը և/կամ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարող են անտեսվել: Սահմանի բացման հարցերին պատասխանելիս, հարցվածներն ավելի շատ սևեռվել են հենց այս երկու խնդիրների վրա: Փոխհարաբերությունների համակողմանիությունը և երկու երկրների կարճաժամկետ և երկարաժամկետ շահերի տարբերակման բարդություններն էլ ավելի խրթին են դարձնում դիվանագիտական քննարկումներն և քաղաքական քայլերը: Եթե նախապայմաններ չլինեն, էականորեն կմեղմանա տնտեսական օգուտների և ոչ-տնտեսական ծախսերի համակշռման խնդիրը, քանի որ նախապայմանները Հայաստանի համար, ըստ էության, ծախսային մաս են: Ինչևէ, այս ամենից հետևում է, որ Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու գործընթացում ՀՀ կառավարությունը հնարավորինս պետք փորձի նվազեցնել հասարակության համար դրա հնարավոր բացասական հետևանքները:

Ըստ հարցվածների, Թուրքիայի հետ սահմանի բացումը քաղաքական որոշակի մարտահրավեր է պարունակում: Մի կողմից, հարցվածների 64%-ը կարծում է, որ հայ-թուրքական սահմանի բացումը դրական ազդեցություն կունենա Հայաստանի տնտեսության վրա, մյուս կողմից, նրանց 57%-ը մտահոգություն է հայտնում, որ սահմանի բացումը կվնասի երկրի անվտանգությանը (տե՛ս աղյուսակ 3.2): Վերջնական ազդեցությունը պետք է մանրամասն մշակվի ՀՀ կառավարության կողմից և, ինչպես հարկն է, քննարկվի հասարակության հետ:

Հարցվածների մեծամասնությունը համամիտ է, որ Թուրքիային չի կարելի վստահել կամ Թուրքիան թշնամական քաղաքականություն է իրականացնում Հայաստանի և Ղարաբաղի հանդեպ[20]: Սակայն, հայերի հանդեպ թուրք ժողովրդի վերաբերմունքի մասին հայաստանցիների ընկալումներն առնվազն վերջին հինգ տարիների ընթացքում նկատելիորեն փոխվել են: Բացի դրանից, հայաստանցիներն ավելի շատ չեզոք կամ դրական վերաբերմունք ունեն Եվրոպական Միությանը Թուրքիայի հավանական անդամակցությանը: Աննշան փոփոխություն կա նաև թուրքերի հետ բիզնես անելու կամ ամուսնանալու վերաբերյալ հայաստանցիների կարծիքում: Թուրքիայի և թուրք ժողովրդի հանդեպ հայաստանցիների վերաբերմունքի փոփոխության շարժընթացը դրական է, և դա իր հերթին, թերևս, դրական ազդեցություն կունենա Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունների կարգավորման նախաձեռնությունների և/կամ քաղաքականության վրա:

Սակայն մեկ կարևոր վերապահում կա. 2014թ-ին հարցվածների 94%-ը նշել է, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը պետք է նախապայման լինի Թուրքիայի՝ ԵՄ անդամակցության համար, մինչդեռ 2012թ-ին, ըստ Կովկասյան բարոմետրի տվյալների,

[20] Տե՛ս գծապատկեր 4.1

նման կարծիք էր հայտնել հարցվածների 84%-ը: Այսինքն, ըստ երկու ներկայացուցչական հարցումների, Հայոց ցեղասպանության ճանաչման կարևորությունը մեծացել է:

Թուրքիայի՝ ԵՄ անդամակցության հարցում Հայաստանցիների վերաբերմունքի բարելավումը դրսևորվում է նրանում, 2014թ-ին, 2010թ-ի համեմատ, լիովին բացասական վերաբերմունք արտահայտածների բաժինը նվազել է 18 տոկոսային կետով: Միաժամանակ, չեզոք դիրքորոշում ունեցողների բաժինը աճել է գրեթե նույն չափով: Ըստ ՌԱՀՀԿ հետազոտության, 2005թ-ին հարցվածների մոտ 52%-ը դեմ է եղել Թուրքիայի անդամակցությանը ԵՄ-ին: Կովկասյան բարոմետրի 2010թ-ի տվյալներով, հարցվածների 46%-ի և 17%-ի վերաբերմունքը Թուրքիայի՝ Եվրոպական Միությանը հնարավոր անդամակցությանը եղել է լիովին բացասական կամ ավելի շուտ բացասական: Չնայած ՌԱՀՀԿ (2005թ.), ԿԲ (2010թ.) և այս հարցման տվյալների բազաների համադրելիությունը կատարյալ չէ, տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ վերջին տասնամյակում հայաստանցիները Թուրքիայի հնարավոր անդամակցությանը Եվրոպական Միությանն ավելի դրական և չեզոք են վերաբերում (57%, տե՛ս հավելված 1, գծապատկեր 14): Հնարավոր է, որ նրանք Թուրքիայի ԵՄ անդամակցությունը Հայաստանի համար բարենպաստ են համարում, քանի որ դա ենթադրում է Թուրքիայի կողմից որոշակի պահանջների կատարում:

Ըստ հարցվածների, Հայաստանի կառավարությունը պետք է տարածքային իրավունքների հատուցում պահանջի Թուրքիայից՝ որպես Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման հետևանք: Չնայած տնտեսական զարգացման կարևորության մասին տեղեկացվածության բարձր մակարդակին, հարցվածների շրջանում հատուցման պահանջատիրությունը ևս ընդգծված է: Հայաստանցիները քաջ գիտակցում են, որ Թուրքիան շատ զգայուն է հատուցման պահանջների նկատմամբ, և դիտարկում է Ղարաբաղյան հիմնահարցը՝ որպես տնտեսական կապերի հաստատման հիմնական նախապայմաններից մեկը:

Չնայած պաշտոնական Երևանի՝ հարաբերությունների կարգավորման և Ցեղասպանության ճանաչման բազում նախաձեռնություններին, հարցվածները չեն հավատում, որ Թուրքիան կճանաչի Հայոց Ցեղասպանությունը ՀՀ պաշտոնական քաղաքականության ազդեցությամբ (տես՝ գծապատկեր 5.2): Ավելին, նրանք կարծում են, որ Ցեղասպանության ճանաչումը կարող է տեղի ունենալ երրորդ կողմի՝ Ռուսաստանի, Եվրոպական Միության կամ Միացյալ Նահանգների ճնշմամբ: Պաշտոնական Երևանի քաղաքականությունը ճանաչման ուղղությամբ պետք է ավելի թիրախավորված և արդյունավետ լինի՝ հանրության համար համոզիչ լինելու նպատակով: ՌԱՀՀԿ (2005թ.) հանրային կարծիքի հարցմանը հնչեցվել էր հարց՝ «Ի՞նչ միջոցով պետք է Թուրքիան ճանաչի Հայոց ցեղասպանությունը»: Արդյունքները համարժեք են ներկա հարցման բացահայտումներին. 2005թ-ին հարցվածների միայն 8%-ն էր հավատում, որ Հայաստանի պետական քաղաքականությունը կարող է ստիպել Թուրքիային ճանաչել Ցեղասպանությունը, իսկ 50%-ը հույս էր տածում, որ դա տեղի կունենա միջազգային ճնշմամբ: Հարցվածների 27%-ը կարծում էր, որ ճանաչումը հնարավոր կլինի, եթե դա դառնա նախապայման Թուրքիայի Եվրամիությանն անդամակցելուն:

Հարցումը նաև ցույց է տալիս, որ թե՛ Հայաստանի, թե՛ Թուրքիայի կառավարությունների քաղաքականությունները չեն կարող անտեսել Ադրբեջանի ազդեցությունը երկկողմ հարաբերությունների վրա: Հարցվածների ավելի քան 70%-ը մատնանշել է, որ Ադրբեջանը մեծապես ազդում է Հայաստան-Թուրքիա հարաբերությունների վրա: Եթե Հայաստանը քաղաքական քայլեր ձեռնարկի, խիստ կանխատեսելի է, որ պաշտոնական Անկարայի պատասխանը կներառի Ադրբեջանի տեսակետը Հայաստանի քաղաքականության նկատմամբ: Հայաստանը և Թուրքիան ստիպված են կառուցել իրենց քաղաքականությունները՝ հիմնվելով ոչ միայն իրենց ընդդիմախոսների, այլև երրորդ կողմի (Ադրբեջանի) քաղաքական արձագանքների վրա: Երկկողմ խաղը վերածվում է մի քանի մասնակիցներով խաղի, որի դեպքում ավելի դժվար է ձեռք բերել երկարաժամկետ համաձայնություններ: Մյուս կողմից, հաշվի առնելով, որ Հայաստան-Թուրքիա հարաբերություններում շատ մեծ է (ըստ հարցման արդյունքների), Ադրբեջանի ներգրավվածությունը, ՀՀ կառավարությունը կարող է համարել, որ Ադրբեջանի հետ հարաբերությունների բացակայության պայմաններում շատ քիչ է Թուրքիայի հետ կառուցողական շփման հավանականությունը: Սա կարող է վնասել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացին: Թուրքիայի կառավարությանը, թերևս կարելի է առաջարկել, որ Հայաստանի հետ հարաբերություններում հետևի միայն Թուրքիայի շահերին, ինչը կարող է և չհամընկնել Ադրբեջանի քաղաքականության հետ: Հակառակ պարագայում, դա կվանի Հայասատանին կարգավորման գործընթացից:

Հարցվածները որոշակի նշանակություն են տալիս քաղաքացիական հասարակության այն նախաձեռնություններին, որ ուղղված են հայ-թուրքական հաշտեցմանը: Նրանք առաջարկում են մի շարք քայլեր, որոնցից ոչ մեկը, սակայն, չի արժանացել հարցվածների մեծամասնության հավանությանը: Կարելի է ենթադրել, որ հաշտեցման գործում քաղաքացիական նախաձեռնությունների ազդեցությունը չի կարևորվում: Ի՞նչ «ավանդ» կարող է ունենալ ՀՀ կառավարությունն այս հարցում: Վերլուծությունը հուշում է, որ պաշտոնական քաղաքականությունը բավականին համապատասխանում է հանրային նախընտրություններին, հետևաբար, ՀՀ կառավարությունը կաջակցի քաղաքացիական հասարակության նախաձեռնություններին, քանի դեռ դրանք արտահայտում են հասարակության պահանջները: Քաղաքացիական նախաձեռնությունները սակավ կարևորելու (ըստ հարցվածների) հնարավոր բացատրությունն այն է, որ Հայաստանի հասարակությունը բավականաչափ չի գնահատում, հետևաբար՝ չի ցանկանում լիազորել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդիրները քաղաքացիական հասարակության կառույցներին: Եթե դա այդպես է, ապա պահանջվում են Հայաստանի կառավարության և միջազգային կազմակերպությունների երկարաժամկետ ջանքերը՝ հասարակական կազմակերպությունների և դրանց նախաձեռնությունների դերի ու նշանակության (մասնավորապես՝ կարգավորման գործընթացում) մեծացման համար:

Վերջապես, վերլուծելով 2014թ-ին Տնտեսական և արտաքին քաղաքականության հետազոտությունների կենտրոնի (Թուրքիա) կողմից Թուրքիայի հանրային կարծիքի

հարցման տվյալները և հաշվի առնելով, որ Թուրքիայի կառավարությունը հետևողականորեն խուսափում է Ցեղասպանության ճանաչումից, հատկանշական է, որ Թուրքիայում հարցվածների 25%-ը Ցեղասպանության ճանաչման խնդրի վերաբերյալ որևէ կարծիք չի հայտնել: Հարցվածների մոտ մեկ երրորդը կողմ է արտահայտվել 1915թ-ի դեպքերի ճանաչմանը, ինչը ենթադրում է, որ չի կարելի բացառել Թուրքիայի կողմից Ցեղասպանության ճանաչման և երկու ժողովուրդների հաշտեցման հնարավորությունը:

Հավելված 1. Գծապատկերներ և աղյուսակներ

Գծապատկեր 7. Հարցվածների հետաքրքրվածությունը հայ-թուրքական պաշտոնական հարաբերությունների կարգավորմամբ ըստ տարիքային խմբերի



Գծապատկեր 8. Հարցվածների հետաքրքրվածությունը հայ-թուրքական պաշտոնական հարաբերությունների կարգավորմամբ ըստ նրանց կրթամակարդակի



Գծապատկեր 9. Հարցվածների հետաքրքրվածությունը հայ-թուրքական պաշտոնական հարաբերությունների կարգավորմամբ Թուրքիային սահմանակից կամ ոչ սահմանակից մարզերում



Գծապատկեր 10. Հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալիս Հայաստանում ու՞մ կարծիքներն են առավել վստահելի Ձեզ համար



Գծապատկեր 11. Որքանո՞վ եք հավանություն տալիս Հայաստանի և Թուրքիայի սահմանի բացմանը



Գծապատկեր 12. Հարցվողների հավանություն տալի՞ս եք, թե՞ ոչ, երբ Ձեր ազգակիցները բիզնես են անում կամ Ձեր ազգի կանայք/տղամարդիկ ամուսնանում են թուրքերի հետ



Գծապատկեր 13. Որքանո՞վ եք հավանություն տալիս սահմանի բացմանը նախապայմաններով (սահմանի բացմանը դրական և/կամ չեզոք վերաբերմունք ունեցողների թվից, N=562, %):



Գծապատկեր 14. Ինչպե՞ս եք վերաբերում Թուրքիայի անդամակցությանը Եվրամիությանը



Գծապատկեր 15. Պահանջներ, որոնք պետք է կատարի Թուրքիան, որպեսզի մուտք գործի Եվրամիություն (բազմակի պատասխաններ)



Գծապատկեր 16. Ձեր նախնիներից որևէ մեկը այս կամ այն կերպ տուժե՞լ է Հայոց ցեղասպանությանից (տեղահանվել է Թուրքիայից կամ նահատակվել)



Գծապատկեր 17. Ի՞նչ դիրքորոշում պետք է ընդունի Հայաստանը Թուրքիայի հետ հարաբերություններում



Գծապատկեր 18. Թուրքիայի հետ ո՞ր ոլորտներում պետք է հարաբերություններ հաստատի Հայաստանը (բազմակի պատասխաններ)



Գծապատկեր 19. Ձեր կարծիքով, որքանո՞վ է ազդում Ադրբեջանը հայ-թուրքական հարաբերությունների վրա



Աղյուսակ 4. Հայացք Թուրքիայից. «Ձեր կարծիքով, ո՞րը պետք է լինի Թուրքիայի քաղաքականությունը Հայկական հարցի առնչությամբ» (Թուրքիայում 2014թ. նոյեմբեր-դեկտեմբերին 1508 հարցվածների թվից, %)

	Թուրքիան պետք է						Դասասխանների թիվը, մարդ
	ներողություն խնդրի 1915թ. հայերի կոտորածի համար և ընդունի ցեղասպանությունը	ներողություն խնդրի 1915թ. հայերի կոտորածի համար, բայց այլ քայլ չանի	ափսոսանք հայտնի 1915թ. հայերի կոտորածի համար, բայց ներողություն չխնդրի	հայտարարի, որ 1915թ-ին ոչ միայն հայերն են կոտորվել, և ափսոսանք հայտնի այդ ժամանակահատվածում Օսմանյան կայսրության բոլոր քաղաքացիների կոտորածի համար	ոչ մի քայլ չանի	Դասասխան չկա	
Ընդամենը	9.1	9.1	12	23.5	21.3	25	1508
Իգական	8.1	9.3	9.8	22.1	20.2	30.5	750
Արական	10.1	8.9	14.2	24.9	22.4	19.5	758
18-24	12.8	8.4	8.9	22.2	29.2	18.5	250
25-34	14.3	4.9	12.3	26.2	20.7	21.6	365
35-44	5.2	9.7	15.1	19	19.8	31.2	307
45-54	9.3	7.3	10.6	22	20.8	29.9	249
55 +	4.1	14.8	12.2	26.7	18	24.1	337
Քաղաքային	6.1	8.4	11.4	26	22.3	25.8	1173
Գյուղական	19.5	11.5	14.3	14.8	17.9	22.1	335

Աղբյուրը. Public opinion surveys of Turkish foreign policy 2015/1, EDAM

Հավելված 2. Ընտրանքի մեթոդաբանություն և հարցվածների ժողովրդագրական բնութագիր

Ընտրանքի չափը. 1164 հարցվող՝ ՀՀ չափահաս բնակչությունից (18 տարեկան և ավելի)
Ընտրանքի սխալը. ± 2.87%, 95% վստահության միջակայքում
Ընտրանքի մեթոդը. Բազմաստիճան կլաստերային ընտրանք՝ քաղաքային/գյուղական բնակավայրերի և վարչական շրջանների (մարզերի) նախնական ստրատիֆիկացմամբ:
Ընտրանքի շրջանակը. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված ֆիզիկական անձ բաժանորդների հասցեացանկը: Քառաստիճան ընտրանքի ձևավորման համար իրականացվել են հետևյալ քայլերը .

- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի մասնաճյուղերի խմբավորում ըստ մարզերի և ընտրանքի համամասնական բաշխում ըստ մարզերի, ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի,
- մարզերի ներսում առաջնային ընտրանքային միավորների կամ քլասթերների ձևավորում (դրանք միջինում ընդգրկել են 200 տնային տնտեսություն) և պատահական ընտրանք,
- ընտրանքի առաջնային միավորների սահմաններում տնային տնտեսությունների պատահական ընտրություն,
- տնային տնտեսությունում հարցվողի ընտրություն՝ վերջին ծննդյան օրվա մեթոդով:

Աղյուսակ 5. Ընտրանքային հետազոտության տարածքային ընդգրկումն ըստ բնակավայրերի տիպի և մարզերի.

Բնակավայր	
Երևան	421
Այլ քաղաքներ	335
Գյուղեր	408
Մարզ	
Արագածոտն	48
Արարատ	96
Արմավիր	96
Գեղարքունիք	72
Կոտայք	108
Լոռի	108
Շիրակ	73
Սյունիք	58
Վայոց Ձոր	24
Տավուշ	60
Երևան	421

Տվյալների հավաքագրման աշխատանքների ժամանակահատվածը. դեկտեմբերի 13-22, 2014թ.
Էմպիրիկ տվյալների հավաքագրման մեթոդը. դեմ առ դեմ հարցազրույց տնային տնտեսության կացարանում՝ թուղթ և գրչի օգնությամբ:
Կշիռների մասին. տվյալների հավաքագրումից հետո դրանք կշռվել են ըստ մարզի, տարիքի և սեռի՝ ընտրանքը թիրախային բնակչության պարամետրերին համապատասխանեցնելու համար: Ընտրանքով ձևավորված նախնական կշիռները ճշգրտվել են՝ հիմք ընդունելով չափահաս բնակչության կազմի վերաբերյալ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալներն ըստ մարզերի, տարիքի և սեռի, ինչպես նաև հարցումից հրաժարումների աստիճանն՝ ըստ քլաստերների:

Աղյուսակ 6. Հարցվածների ժողովրդագրական բնութագիրը

Սեռ	տոկոս
Տղամարդ	34
Կին	66
Տարիքային խումբ	
18-30	22
31-45	23
46-60	26
61+	29
Կրթություն	
Տարրական կրթություն չունի	0.4
Տարրական (լրիվ կամ թերի)	2.0
Միջնակարգ (թերի)	8.8
Միջնակարգ (լրիվ)	36.6
Միջին մասնագիտական	22.8
Բարձրագույն (թերի)	3.9
Բարձրագույն (լրիվ)	25.0
Հետբուհական	0.5